№ 34 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ՓԵՏՐՎԱՐԻ 14

1907

ԵՐԵՍՈՒՆՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբլի. առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊԵԿՈՎ

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, редакція «Мшакъ». Базарная ул. д. Тамамшева № 16. Կամ Tiflis, Rédaction «Mschak».

Տելեֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.

Տելեֆոն № 253.

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

„ՄՇԱԿ“

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ

ՆԵՐԿԱՅ 1907 ԹՒԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

(35-ՐԴ ՏԱՐԻ)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ. «Մշակի» տարեկան գինը 10 ռուբլի է, տան և մէկ ամսվանը նոյնպէս 10 ր., տան ամսվանը՝ 9 ր., ինն ամսվանը՝ 8 ր., 8 ամսվանը՝ 7 ր., եօթ և վեց ամսվանը՝ 6 ր., հինգ ամսվանը՝ 5 ր., չորս ամսվանը՝ 4 ր., երեք ամսվանը՝ 3 ր., մէկ ամսվանը 1 ռուբլի։

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ. Ամերիկայի բաժանորդները պէտք է վճարեն տարեկան 6 դօլար. Եւրօպայի բաժանորդները՝ 30 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 ռուբլի։

«Մշակին» գրվել կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ. (Բազարնայա և Բարօնսկայա փողոցների անկիւնը). Մտորագրվել կարելի է միայն ամսի 1-ից։

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ կարելի է վճարել ՄԱՍ-ՄԱՍ։

Կայսրութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» գրվելու համար և առհասարակ նամակներ և ծարներ ուղարկելիս, պէտք է դիմել հետևեալ հասցէով. ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ», իսկ արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

Յայտարարութիւններ ընդունվում են բոլոր լեզուներով։

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

Բացվածէ բաժանորդագրութիւն

ՀԱՅԵԼԻ

Գեղարուեստական երգիծաբանական պատկերազարդ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹԻ,

որը երբեմնապէս լոյս կը տեսնի «Հայելի յաւելուած» անուան տակ։

Տարեկան բաժանորդները կը ստանան՝

1) 50 № «Հայելի»։ 2) 12 գեղարուեստական նկարներ, որ տարվայ վերջը առանձին ալբոմ կը կազմեն։ 3) 2 մեծադիր գունատիպ պատկեր հայկական կեանքից (50×60 սմ.) (Առաջին պատկերը կուղարկվի Զատկական համարի հետ, իսկ երկրորդը սեպտեմբերի սկզբին)։ 4) 1 պատի տախտակ պատկերազարդ Օրացոյց 1908 թ.։ 5) 1 յայտնի հայ երգիծաբանների խմբական նկար։

Բաժանորդագրութեան տարին է նոյեմբերից նոյեմբեր։

Տարեկան գինը պրեմիաներով Թիֆլիսում՝ 4 ր., դուրսը՝ 5 ռուբ.։ Կէս տարին՝ 2 ր., դուրսը՝ 2 ր. 50 կոպ.։ Երեք ամիսը՝ 1 ր., դուրսը 1 ր. 25 կ.։ Արտասահման՝ տարեկան 6 ռուբլի, կէս տարին 3 ռուբլի։

Հասցէն՝ Тифлисъ, Редакція «Аели», Дворцовая ул. № կամ Tiflis, Rédaction du Journal «Haeli».

Խմբագիր՝ Վ. Պետրոսեան, Հրատարակիչ՝ Բ. ՃԷպէկեան

(հ. կ.) առ. 5—5

ԿԻՐԱԿԻ, ՓԵՏՐՎԱՐԻ 18-ԻՆ

Արտիստական ընկերութեան դահլիճում Հայոց Ազգագրական ընկերութիւնը կը տայ

ՊԱՐ-ԵՐԵԿՈՅԹ

ԲԱՐԻԿԵՆԴԱՆԸ ՎԵՆԵՏԻԿՈՒՄ

Դահլիճները զարդարված կը լինեն նկարիչ պ. Ֆեթվաճեանի անմիջական հսկողութեան տակ. մեծ դահլիճը կը ներկայացնի «Սուրբ Մարկոսի հրապարակը» Վենետիկում. Երեկոյթի ծրագրի մէջ է մինչի այլոց կը կատարվի «Հարսանեաց գնացքը Վենետիկում», «Սիրերգ», «Իտալական ազգային պարեր», ղեկավարութեամբ Կայսերական Մօսկվայի թատրօնի բալետմէյստեր պ. Ստեպանովի, պարեր՝ առաջնորդութեամբ պ. Օվերլօի։ Կը լինի վենետիկեան տօմբօլա (լոտո) խաղագումարներով (25, 50, 75 և 100 ռուբլի), ծաղկամարտ, սերպանտին, ինքնուրոյն և բնորոշ զգեստների համար կը տրվեն երեք պարգևներ. Երեկոյթի ժամանակ նուագելու են՝ նէապոլիտանական, օպերային և գիւնուրական երաժշտախմբերը։

Սկիզբը ժամը 9-ին երեկոյեան

Ցոմպակների գները՝ 2 ր. 20 կ., բարձրագոյն դպրոցների ուսանողներին՝ 1 ր. 10 կ.։ Ցոմպակներ կարելի է գնել՝ պ. Ե. Ծատուրեանի խանութում (Դօրցօյօյա փող.), պ. Սուքասեանի երաժշտական խանութում և Մայզելսօնի խանութում՝ արտիստական ընկերութեան կից։ Երեկոյթի օրը՝ ժամը 6-ից երեկոյեան կասսայում։

Երեկոյթի մանրամասնութիւնները կը լինեն ծրագրում։

Հ. Շ. Կ. առ. 1—3

ՄԱՍՆԱԳԷՏ ԶԻՆԻՈՐԱԿԱՆ ԲԺԻՇԿՆԵՐԻ

ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

ԵՐԹԵԻԿ ՀԻՒԱՆԴՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Մեծ-Վանքի փողոց, № 5, ոչ հեռու Ալէքսանդրեան այգուց.

Վճարն է խորհրդի համար 50 կոպ.

Հեռախօս № 481.

Ընդունելութիւնը առ. ժ. 11—5 ժ. եր.

Բժ. Տ. Ի. ՐՈՒԴԷՆԿՕ.—Ներքին հիւ. հինգշ., կիր. 3—4 ժամ.

Բժ. Ֆ. Վ. ՁՈՒԴՆՕՎՍԿԻ.—Վիրաբուժ. հիւ. երկ., ուրբ. 2—3 ժ.

Բժ. Մ. Ի. ԵԱՆՁԷՎՍԿԻ.—Ականջի, քթի և բերանի, չորեքշ., ուրբ. 2—3 ժ., երեքշ., կիր. 3—4 ժ.։

Բժ. Վ. Վ. ՎՆՈՒԿՕՎ.—Վիրաբուժ., միզասեռ. երկ., հինգ., շաբ. և կիր. 2—3 ժ.

Բժ. Ն. Մ. ԱՍԳԻՍՕՎ.—Քթի, բերանի և ականջի, երկ. ուրբ. և շաբ. 1—2 ժ., հինգ., կիր., 12—1 ժ.

Բժ. Վ. Գ. ԲՕԺՕՎՍԿԻ.—Ներքին հիվանդով ամենայն 4—5 ժ.

Բժ. Ա. Ն. ՏԵՏՐԱՁԷ.—Կաշուի, վեներ. ամենայն օր 1—2 ժ.

Բժ. Ա. Տ. ԲՕԶՄԱԻԿՍԿԻ.—Երես., երկ., չորեք 4—5 ժ., երեք. շաբ. 3—4 ժ.։

Բժ. Ն. Ի. ՆԷՌԻՑՄԻՆ.—Աչքի, երկ., ուրբ., 12—1 ժ.

Բժ. Ա. Ա. ՆՕՎԻՑԿԻ.—Կանանց, երես., երեքշ., ուրբ., շաբ., կիր. 2—3 ժ.։

Բժ. Զ. Ֆ. ՆԵՎԶՈՐՈՎ.—Առամի հիւ. 11—5 ժ. ամենայն օր.

Բժ. Կ. Մ. ԳԻՎԱՐՍԿԻ
Բժ. Կ. Ի. ՁՈՒԴՆՕՎՍԿԻ } Կլինիքական անալիզ

Բժ. Գ. Ի. ՕՆՕՇԿՕ.—Բժշկ. գիմն. մասամբ, երեքշ. 4—6 ժամ.

Մ. Ե. ԳՕՐՕԳՑԵՎԱ.—Մասամբ. 11—4. ժ.

Մ. ԵՍ. ՊԱՒԼՕՑԿԻ.—Վիրաբ. 12—1 ժ. ամենայն օր, կիրակի օրը 4—5 ժ.

Բժ. Կ Գ. ԳՕՐԱԼԵՎԻՉ.—Ներքին հիւանդ. ամեն օր 12—1 ժամը։

Բժ. Ա. Ա. ՄՕՆՍԷ.—Երես., երեքշ, հինգշ. շաբ. 4—5 ժամը։

Բժշկական խորհուրդներ, մասամբ, սրսկել, անդամահատել, անալիզի ենթարկել, հիվանդներ ստանուներ և ծառաների քննելը—ըստ համաձայնութեան։

առ. (ա. օ.) 67—144

ՀԱՒԼԱԲԱՐԻ ԹԱՏՐՕՆ

Ուրբաթ, փետրվարի 16-ին

Դրամատիկ խմբի սկսնակ դերասան

Հ. ՍԱՆԹՈՒՐՃԵԱՆԸ

Բարեհաճ մասնակցութեամբ Պ. ՎԱՆՇԻՐԻ և Հալաբարի ու ժողովարանի թատերասիրաց նորակազմ խմբի

կը ներկայացնէ

ՊԱՏՈՒԻ ՀԱՄԱՐ

Դրամա 4 գործ. հեղ. Շիրվանզադէի

Մասնակցում են՝ պ.պ. Սանթուրեան, Տէր-Առաքելեան, Սաֆարեան, Վանշիր, Սարեան, Անտոնեան, Ղազարեան, Արուսեակ, տ.տ. Յակոբեան, Օհանեան, Առանեան, օր. Արուսեակ։

Հ. ու. առ 1—2

ԲԺԻՇԿ

Գ. Պապովեան

ՄԱՍՆԱԳԷՏ

ֆթի, կոկորդի եւ ականջի հիւանդութիւնների

Ընդունում է { ցեր. 1—2 ժ. ամեն օր բացի երեկ. 5—7 ժ. ցի ուրբաթ

Միխայլովսկի պրոսպ., տ. Ֆօրբերի № 11.

(Կ. Հ.) առ. 23—60

ԲԺԻՇԿ

Տ. Ա. Իսահակեան

ՄԱՍՆԱԳԷՏ՝

ներքին եւ վեներական հիւանդութիւնների

Ընդունելութիւն { առաւօտ. 10—12 ժ. երեկոյեան 5—7 ժ.

Սօլոլակ, Սերգիեվսկայա 15, Փրիդօնովի տանը։

առ. (Հ.ու.Հ.) 39—100

ԱՌԱՋՆԱԿԱՐԳ

ՀԱՄԱՐՆԵՐ

„ՎԻԿՏՈՐԻԱ“

Թիֆլիսի կենտրօնում, Դվօրցօվայա փողոցի վրա, Փոխարքայի պալատի այգուն կից։ 40 համարները գեղեցիկ կերպով կահաւորված են և ունեն ամեն տեսակ յարմարութիւններ իջևանողների համար։

Օրական վարձը 60 կոպ. սկսած 4 ռուբլի. ամսական վարձողներին զիջումն կը լինի։ Ծառաները վստահելի են։

Ընտանիքով եկողներին արվում է խոհանոցը և լուացքի տեղը ձրի։ Ունի սեպական ճաշարան։

ՏԱՔԻ ԵՒ ՍԱՌՆ ՎԱՆՆԱՆԵՐ

Ելէքտրական լուսաւորութիւն։ Հեռախ. №1033

Համբարձում Եսայեանց

(Հ. Հ.) ա 3—10

Պատիւ ունեմ յայտնել յարգելի ընթերցողներին, որ «ԱՆՆԱՄՈՒՍ» երգիծաբանական թերթի փոխարէն փետրվարի վերջերին լոյս կը տեսնի

„ՄԱԽԼԱՍ“

Երգիծաբանական պատկերազարդ թերթ։

Ուղղութիւնը առաջադիմական, սակայն հեռու կուսակցական գաղափարներից. խընդրում ենք այժմեանից ուղարկել նիւթերը։ Բաժանորդագրութիւն չէ ընդունվում, այլ կարելի է պահանջել իւրաքանչիւր համարը ցանկացած քանակութեամբ։

«ԱՆՆԱՄՈՒՍԻ» նախկին խմբագրութեան անունով ոչինչ չուղարկել։ Ժամանակաւոր հասցէս՝ Թիֆլիս, «Գուտտենբէրգ» գրաւաճառանոցը, յանձնել Յարութիւն Եսայեանին։

առ. (օրամէջ) 2—5

ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ՁԵՂ

(искуственная вощина)

Պատրաստում եմ ձեռնտու գնով, փեբրվար և մարս ամիսներում

Հասցէս Սեր. Բոլ. Կարակլիսէ Աբետիսը Աղաբաբանցէ։

առ. օր. մ. 11—15

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Հողի սովը. Պատգամաւորների կազմը. Մամուլ. Գործազուրկ հայ բանւորների կեանքից. Կուրօպատկինը պատերազմի մասին. Ուսանողական բռնութիւնը. Թատրօն և երաժշտութիւն. Պ. Վահէի թերը ինչ են ասում. Նորից կախարդական շրջանում. Բարձր շրջաններում. Ուսումնարանական ցաւերից. Այլ է ճեմարանը այս տարի. Կառավարչական շրջաններում. Նամակներ խմբագրութեան. Նեղքին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։

ՀՈՂԻ ՍՈՎԸ

I

Մտէք պետական կալուածների դիւանները և տեսէք՝ թէ գիւղացիների ինչպիսի անվերջ պատգամաւորութիւններ մաշում են դռները իրանց բազմաթիւ անգամ կրկնվող խնդիրքներով հողի պակասութեան մասին։

Գիւղական պատգամաւորութիւնները ծախքեր են անում, ժամանակ են կորցնում, հազար ու մի մարդկանց են դիմում և մղկտալով աղերսում են օգնել իրանց ստանալու հող, որի կարիքը ամեն տեղ էլ զգացվում է, իսկ մի քանի տեղերում նա դարձել է մի կ ստարեալ սով։

Հողի պակասելը սարսափելի մտատանջութիւն է պատճառում մեր գիւղացուն և նա դեռ ու դէն ընկած հող է որոնում իր համար։

Արդարև գիւղական տունը, որ հնաբաւորութիւն է ունեցել հողով ապահովել իր ապրուստը, այժմ դրված է մի այնպիսի վիճակի մէջ, որ կամ պէտք է կարողանայ մի տեղից հող ճարել, թէկուզ ծանր պայմաններով, կամ եղած հողը դարձնել աւելի արդիւնաբեր և կամ դիմել կողմնակի աշխատանքների՝ լրացնելու այն պակասը, որ ունի հողագործական տնտեսութիւնը։

Գիւղացին աշխատում է, անկասկած, նախ և առաջ աւելացնել իր հողի քանակը և այդպիսով պահպանել իր նախկին տնտեսութիւնը։ Իսկ եթէ այդ նրան չի աջողվի, այն ժամանակ նա ստիպված կը լինի դիմել ուրիշ միջոցների։

II

Անշուշտ հողի քանակութիւնը անվերջ ու անսահման չէ։

Մի երկիր ունի հողի մի որոշ տարածութիւն, որը չէ կարող աւելանալ և ընդարձակվել։ Եւ եթէ մարդիկ այդ հողը ենթարկել են մշակութեան, այնուհետև նրանք այլևս ոչ մի տեղից չեն կարող յուսալ ստանալու նոր հողեր։ Այն ժամանակ մարդիկ պէտք է կամ աւելի ևս կատարելագործեն հողի մշակութեան արհեստը և այդպիսով աւելացնեն հողի արդիւնքը և կամ աշխատող ոյժերի մի մասը ուղարկեն ուրիշ տեղեր կողմնակի աշխատանքների։

Սակայն հէնց բնական հարցն էլ այն է, որ բոլոր հողերը մշակութեան մէջ չեն և դեռ կան ընդարձակ տարածութիւններ, որոնք կարող էին ծառայել իբրև հողի պաշար՝ աւելացնելու գիւղացիների հողաբաժինները։

Այդ հողային պաշարների քանակը ամեն տեղ միատեսակ մեծ չէ, ուստի և մեր բոլոր գաւառների ցաւերը անկարելի է բուժել միևնոյն եղանակով։

Այդ հանգամանքին աւելացրէք և այն, որ մեր երկիրը առհասարակ չափազանց խստաշունչ է և զանազանակերպ տնտեսական, ազգագրական ու հասարակական պայմաններ ունի իր մէջ, որոնք աւելի ևս բարդ խնդիրներ են դնում մեր առաջ։

III

Մենք, դժբաղդաբար, ճիշտ տեղեկութիւններ չունենք մեր հողային հարստութեան և նրա բաշխման ու դասաւորութեան մասին։ Իսկ այդպիսի տեղեկութիւններ ունենալը շատ կարևոր է մեր խորհրդածութիւնների և գործնական ծրագիրների համար։

Ժամանակն է, որ մեր հասարակութեան ղեկավարող խմբերը և շրջանները լուրջ ուշադրութիւն դարձնէին այդ խնդրի վրա և կազմէին կարելիին չափ ճիշտ նկարագիր մեր արդի հողային վիճակի մասին։

Թէ տեղական զանազան հիմնարկութիւնների մէջ, թէ Պետական Դումայում հեղինակաւոր խօսք ասելու ու դիմումներ անելու համար անհրաժեշտ է, որ մենք կարող լինենք հանդէս բերել ճիշտ թուեր, որոշ ցուցմունքներ և պատճառաբանված առաջարկութիւններ։

Ի հարկէ այդպիսի տեղեկութիւններ ժողովելը հեշտ չէ։ Եւ մենք ամենևին հեշտութեան հարց չենք դնում հրապարակի վրա, այլ անհրաժեշտութեան։ Իսկ երբ մի անգամ անհրաժեշտութեան հարց կայ, պէտք է ամեն միջոց գործ դնենք, որ նա բաւարարութիւն ստանայ։

Մենք պէտք է գիտենանք, թէ որքան հող ունի գիւղացին և ինչպիսի հողային պաշարներ ունի մեր երկիրը։

Դա հերթական պահանջ է։

Ա. Բալանթար

ՊԱՏԳԱՄԱՒՈՐՆԵՐԻ ԿԱԶՄԸ

—

Ակկմօլինսկի շրջանի կողմից, Սիբիրի կօղակներից—Լապտէվ, Դումայի նախկին անդամ, ուղղափառ։

Պօլտաւայի նահանգի կողմից—Պերսկի, քահանայ, ռուս ժողովրդի դաշնակցութեան Կօբէլիակի բաժնի նախագահ. Վլասենկօ, Վալէցկի, Դուբօվիկ—ռոլոր երեքն էլ աջակողմեաններ են, կօղակներ։

Սմարա քաղաքի կողմից ընտրվել է Կլիժէվ, հոկտեմբերական, տարբական դպրոցների տեսուչ։

Ուրալսկի շրջանի կողմից, շինական նստակեաց ազգաբնակութիւնից—Կօզմօդամեանսկի, աշխատաւորական, անասնաբոյժ. օտարազգիների կողմից—Կարատայէվ, սահմ.-ռամկավար, իրաւաբան։ Ուրալսկի կօղակների կողմից—Երէմին, սահմ.-ռամկավարներից ձախ, բժիշկ։

ՄԱՄՈՒԼ

—

Պետական Դումայի օպոզիցիոն լինելը արդէն կասկածից դուրս է։ Սակայն այդ հանգամանքը ամենևին չէ վերացնում Դումայի արձակման սպառնալիքը, և վերջնիս վերացումը հերթական ու անփոփոխելի հարց է դառնում։ Պարզ է, որ կառավարութիւնը պէտք է աշխատէ շուտ ազատվել այդպիսի անհնազանդ Դումայից և իր այդ նպատակին հասնելու համար մեծ ջանք պէտք է գործէ վարկաբեկելու Դուման ազգաբնակութեան աչքում՝ ժողովրդի ընտրեալներին ցոյց տալով իբրև յեղափոխականներ, որոնք խոչընդոտ են հանդիսանում կառավարութեանը սահմանադրական կազմ հաստատելու։ Թէ հասարակական բարձր խաւերը, թէ օպոզիցիոն կուսակցութիւններն ու մամուլը ներկայումս զբաղված են այն հարցով, թէ ինչպիսի ուղղութեամբ առաջ տանեն Դումայի գործունէութիւնը, ինչ գործելակերպով նա պէտք է հանդէս գայ կուռելու բիւրօկրատիայի դէմ, որպէսզի կարելի լինի մի կողմից ապահովել Դումայի գոյութիւնը, միւս կողմից առաջ տանել ժողովրդի ազատագրութեան դատը և վերակազմել երկրի պետական կեանքը առանց վտանգաւոր ցնցումների—մարդկային նոր զոհերի, նոր արիւնհեղութիւնների։

Այդ կախված կը լինի մասամբ Դումայի օպոզիցիայի գործելակերպից։

Այդ առիթով «Новь» լրագիրն ասում է.

Եթէ օպոզիցիան կը շեղվի լոյալ, օրինական ճանապարհից և կուռի կը բռնվի կառավարութեան հետ բոլորովին զանց առնելով Դումայի համար հիմնական օրէնքներով դրված պահանջները, կառավարութեան գործը դիւրացված կը լինի։ Կառավարութիւնը օրինական շարժառիթ կունենայ արձակելու յեղափոխութեան յարկ ծառայող Դուման, և կառավարութիւնը, ի հարկէ, օգուտ կը քաղի դրանից և կը ցրէ «անհնազանդ» Դուման։ Իսկ եթէ օպոզիցիան կը մնայ սահմանադրութեան սահմաններում և կը զբաղվի օրէնսդրական աշխատութեամբ, այն ժամանակ Դուման պէտք է փրկված համարել, գոնէ, մօտիկ ժամանակների համար։

Յօդուածագիրը բաւականին համոզիչ կերպով ապացուցանում է ծայրայեղ ձախակողմեանների հայեցակետի սխալ լինելը Դումայի վերաբերմամբ։ Այժմ Ռուսաստանին ինչ է հարկաւոր։

Սօցիալ-դեմօկրատները, գոնէ, մեծամասնականները, Ռուսաստանի բարօրութեան համար անհրաժեշտ են համարում ժողովրդական մասսաների յեղափոխականացումը և կառավարութեան վարկաբեկումը ազգաբնակութեան աչքում։ Այդ տեսակէտով երկրորդ Դուման, նրանց կարծիքով, պէտք է ծառայէ իբրև յեղափոխական զէնք, իբրև ամբոխն յեղափոխական նպատակների ապիտացիայի համար։ Թող կառավարութիւնը նրան ցրէ, մենք նրան, իբրև Դումայի, մեծ արժէք չենք տալիս, նա մեզ համար ոչ այլ ինչ է, բայց եթէ յեղափոխական մի էշտապ։ Համարեա նոյնանման տեսակէտ ունեն և միւս ծայրայեղ ձախակողմեանների ներկայացուցիչները։

Եւ մատնանշելով, որ մասսաների յեղափոխականացումը և կառավարութեան վարկաբեկումը հէնց ինքը կառավարութիւնը կատարում է անօրինակ թափով, և իբրև ապացոյց յիշատակելով օպոզիցիայի տարած յաղթանակը ընտրութիւններին, աւելացնում է.

Մեր կարծիքով Ռուսաստանը ներկայումս կարօտ է ոչ թէ էֆֆէկտաւոր և գրգռիչ ճառերի, որոնք պարլամենտական ամբիոնից ուղղվում են կառավարութեան հասցէին, այլ լուրջ և յամառ գործնական աշխատանքի, որը կարող լինի վերջապէս առաջ շարժել պետութիւնը իր հին հիմունքներից և հաստատել սահմանադրական կարգեր։ Իսկ դա հնարաւոր է միայն այն դէպքում, եթէ Դուման կը հրաժարվի յեղափոխական քայլերից և կը զբաղվի օրէնսդրական աշխատանքներով և կը հաստատէ այն օրինագծերը, որոնց մշակել էր առաջին Դուման և, գործադրելով կեանքի մէջ, հետզհետէ կը վերանորոգէ Ռուսաստանը՝ դարձնելով նրան սահմանադրական ոչ միայն խօսքով, այլ և գործով։

Դրան կարելի է հասնել միայն այն ժամանակ, երբ մինիստրութիւնը պատասխանատու կը դառնայ Դումայի առաջ։

Իսկ պատասխանատու մինիստրութիւն ըստանալը յօդուածագիրը կարելի է համարում

ոչ թէ հայհոյանքներ ուղղելով մինիստրների հասցէին, ոչ թէ նրանց խօսքերով դուրս անելով, այլ սիստեմատիկ և յամառ կերպով առանձնացնելով մինիստրներին ժողովրդից։ Բարոյական առանձնացումը արդէն երևաց ընտրութիւնների ժամանակ։

Սակայն միայն խօսքով անվստահութիւն յայտնել բաւական չէ։ Հարկաւոր է մինիստրներին հեռացնել և անջատել ժողովրդից իրաւաբանական տեսակէտից էլ։ Դա կարելի է անել միայն պարլամենտի օրէնսդրական և բիւջետային իրաւունքները յամառ և սիստեմատիկ կերպով իրագործելով, մերժելով բիւրօկրատական օրինագծերը և նրանց հակադրելով Դումայի մշակած սեփական օրինագծերը։ Այդ տակտիկան մինիստրներին կը հարկադրի կամ զիջել ժողովրդական ներկայացուցիչների պահանջներին և կամ հրաժարական տալ։ Սահմանադրական երկիրներում մինիստրութիւնը չէ կարող կառավարել երկիրը առանց ժողովրդի վստահութեան, առանց յենարան ունենալու պարլամենտում։

Այդպէս է մտածում «ժողովրդական ազատութեան» կուսակցութեան օրգան «Новь» լրագիրը. նոյն խորհրդածութիւններն է անում և նոյն տեսակէտով առաջնորդվում անկուսակցական «Р. В.» լրագիրը, որ Ռուսաստանի օպոզիցիոն օրգաններից ամենահիմնական է համարվում։

ԳՈՐԾԱԶՈՒՐԿ ՀԱՅ ԲԱՆՒՈՐՆԵՐԻ ԿԵԱՆՔԻՑ

(Նամակ Բագուից)

—

Փետրվարի 9-ին

Ինչպէս «Մշակի» անցեալ համարում գրել էի, որ գործազուրկները ժողով են ունենցել, ժողովի շարունակութիւնը տեղի ունեցաւ կիրակի օրը, իսկ երրորդ ժողովը այսօր, որը մինչև վերջը հնար չեղաւ շարունակել։

Կիրակի օրվայ ժողովը տեղի ունեցաւ Մարդ. ընկ. աշխատանքի տանը։ Ներկայ էին մօտաւորապէս 8—9 հարիւր հոգի։

Բանւորները՝ եօթը հոգուց բաղկացած՝ մի պատգամաւորութիւն (կօմիսիա) ընտրեցին, որպէսզի այդ կօմիսիան գնայ նաբթահանքերը ու բանակցութեան մէջ մտնէ գործադուլ արած բանւորների ներկայացուցիչների հետ։ Երկրորդ պարտականութիւնը դրվեց, որ այդ կօմիսիան դիմէ կուսակցութիւններին, որպէսզի վերջիններս իրանց ներկայացուցիչներն ուղարկեն 9-ին կայանալիք երրորդ ժողովին։

Գործազուրկների պատգամաւորները իրանց պարտականութիւնը կատարեցին և մի քանի անգամ Բալախանի գնացին յայտնելու իրանց միտքի նպատակը։

Այսօր, ամսի 9-ին նշանակված էր երրորդ ժողովը։

Ներկայ էին գործազուրկների կօմիսիան, գործադուլ արածներից մի քանի հոգի, հնչակեանների կուսակցութեան և հայ ս.-դ. բ. կուսակցութեան ներկայացուցիչները։ «Օսցիալիստ» Դաշնակցութիւնը նոյնպէս բացակայ էր ինչպէս և նախկին ժողովներում։

Դաշնակցութեան բացակայութիւնը աչքի էր ընկնում, և Բալախանուց եկած կօմիսիաներն մի քանի անգամ շեշտեցին։

Աւելորդ չեմ համարում ասել, որ մի քանի կատակչիներ քչփչում էին, որ զօուրմայով փլաւ չը կայ, եթէ լինէր կը՝ գային։

Ժողովը բացվեց ցերեկվայ ժամի 4½-ին։

Ներկայ գտնվող պատգամաւոր-ներկայացուցիչների մէջ կային ռուսներ և վրացիներ, թէև ժողովը վերաբերում էր զուտ հայկական ֆիրմաների գործադուլ արած բանւորներին և գործազուրկ հայերին։

Ռուսներից մէկը հարց դրեց. բաժանում էք հայ բանւորներին միւս ազգութիւններից, կամ, միտիայն, հայ գործազուրկներին պիտի տեղաւորեր։

Հարցը բաւական փափուկ էր և բաղմակողմանի մութը, որը շատ ցանկալի էր միանգամ ընդմիշտ պարզել այդ ազգայնութեան հարցը։

Ռուս ընկերը իր խօսքը վերջացնելու ժամանակ դրսում պայթեց մի ատրճանակ (հարբած մարդիկ էին կռուում)։ Ժողովականները ահռելված եղան ցրվել և թողնել մի այլ ժամանակի։

Ասացի, որ ռուս ընկերոջ արծարծած միտքը բաւական փափուկ է, բայց և այնպէս վիճելի և պարզելու արժանի։ Թէ ինչ կը պատասխանէին կօմիսիաները և կուսակցութիւնների ներկայացուցիչները—մեզ համար առայժմ այդ մութն է։ Սակայն, մեր համեստ կարծիքով, ինչպէս արդէն ներկայ գտնվողները իրանց շարժումով ցոյց տուին, նկատվում էր, որ տուր ու դժվոցով պիտի լուծվեր այդ հարցը և կամ ու կուլան պիտի կտրվեր գլխաւորապէս օտար ֆիրմաների գլխին։

Ահա թէ ինչպէս։

Ինչպէս Գերմանիան միլիօններ է ծախսում, միսօնարներ է ուղարկում Կովկաս քրիստոնէութիւն քարոզելու, քրիստոնեաների թիւը աւելացնելու, և քարոզիչ աստուածաբանները առաջին քայլը սկսում են հայերից, հայերին են սկսում քրիստոնեայ դարձնել, չը նայելով որ դեռ գերմանական ազգը աշխարհումը գոյութիւն չունէր, բայց հայերը ոչ թէ քրիստոնեայ էին և են, այլ և կռում, թրովարով էին տարածում աւետարանի վարդապետութիւնը։ Այդ քարոզիչները քաջ գիտենալով, որ մահմեդականները քրիստոնեայ չեն, բայց և այնպէս նրանց հետ գործ չեն ուզում ունենալ, մեռնել, ապրել իրանց տարածած վարդապետութեան համար։

Այդ հարցը, ընթերցող, ես լուծել չեմ կարողանում մինչև այսօր էլ, չը նայելով քսան տարի իմ մտածմունքիս առարկաներից մէկն է։

Եւ մեր պ.պ. ընկերները օսցիալ-դեմօկրատները գերմանական քարոզիչներից էլ մի քիչ դէնը անցել են։

Որ շրջիկը, որ պրօպագանդիստը, որ բարակ ձեռափայտը ձեռքն է վերցնում, ակնոցներն էլ աչքին դնում, նրանք էլ թուրք, լեզգի, ռուս, վրացի, հրէայ և այլն թողած հէնց վազում են հայ բանւորի գլխին ու գործադուլ անել են կարողանում, փոխանակ յեղափոխութեան մասին որոշ գաղափար ներշնչելու նրանց գլխում, փոխանակ հայ բանւորի շարքումն էլ թուրքին և ռուսին նստեցնելու, ամեն մի «քեալագ» հայի գլխին են դնում, օձը հայ բանւորի ձեռքով են բռնում։ Եւ դրա հետևանքը այն է եղել, որ 3—4 տարի առաջ 30 հազար հայ բանւորների թիւը հասել է 8—10 հազարի։

Այսօր ոչ մի օտար ֆիրմայում հայ չեն ընդունում, պարզ ասելով, որ հայը աշխատել չէ կամենում, խարդախ է, գործադուլներով է զբաղված և այլն։

Ձեռիս տակ տասնեակ փաստեր կան, որ օտար ֆիրմաների կառավարիչները այդ ասել են, և նոյնիսկ յայտնի Դօլուխանովի միջնորդութիւնն անգամ մերժված է օտար ֆիրմաների ներկայացուցիչների առաջ։ Եւ չնորհիւ այդ պատճառների այսօր Բագուում ոչ մի ազգութիւն այնքան պարապ բանւորներ չունի, որքան հայը և ոչ մի պարապ մարդ 5—6—8 ամիսներով պարապ չէ մնում, ինչպէս հայը։

Հոգ չէ, մենք ընդունում ենք ընկեր ռուսի առաջարկը և հայ բանւորների հետ միասին կը մտածենք, կը հոգանք նաև ռուս և թուրք պարապ բանւորների համար ու եթէ աջողվեց տեղաւորել բոլորին էլ հաւասար տոկոսով կը՝ տեղաւորենք։ Սակայն, ինչպէս և ինչ խղճով մի քանի հազար գործազուրկներին փաթաթել միայն 3—4 հայ ֆիրմաների վզին։ Եթէ ազգութիւնների խարութիւն չը կայ, այն ժամանակ այդ գործազուրկներին, առանց ազգի ու կրօնի խարութեան, բաժանել բոլոր ֆիրմաների վրա—հայի, թուրքի, ռուսի, հրէայի և անգլիացու։

Այդպէս է քարոզում նաև համայն մարդկութեան սկզբունքը, այդպէս են և ս. դ. ճառերը։

Բայց իրականութեան մէջ առայժմ չենք տեսնում....

Թ. Մէժլումեան

ԿՈՒՐՈՊԱՏԿԻՆԸ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՄԱՍԻՆ

Լոնդոնի լրագիրներում արդէն սկսել են քաղուածքներ գենեռալ Կուրոպատկինի՝ ռուս-եապօնական պատերազմի մասին գրած աշխատութիւնից։ Իրաւ պարտութեան պատճառներին հրամանատարը մատնանշում է բանակի մէջ տիրող անկարգապահութիւնը։ Գենեռալները շատ յաճախ հրաժարվում էին կատարելու հրամանատարի կարգադրութիւնները։ Ոմանք, իրանց զինուորական հանճար երևակայելով, պատերազմը մղելու համար նոր ծրագիրներ էին մշակում։ Իւրաքանչիւրը աշխատում էր զործել այնպէս, ինչպէս իր քէֆն է ուզում։ Զօրքերը դուրս էին բերում պատերազմի դաշտ առանց վարժեցնելու և ոգևորելու։ Գենեռալները իրար դէմ հաշտ չը լինելով միմեանց ոտի տակ էին քանդում, մըրցում իրար դէմ։ Անաջողութեան վրա սաստիկ ազդում էր և այն հանգամանքը, որ թշնամու ոյժերի մասին ճիշտ հասկացողութիւն բոլորովին չը կար։ Պատերազմի հէնց սկիզբներից սպաները մեծ արհամարհանքով էին վերաբերվում դէպի եապօնացիների ոյժերը, մինչդեռ վերջում չափազանց մեծացնում էին այդ ոյժերը։ Գենեռալ Կուրոպատկինը մի քանի դէպքեր է մատնանշում, երբ սպաները ամենաանշան առիթից թողել են դիրքերը։

Գենեռալ Կուրոպատկինը չէ խնայում և իրան։ Նա խոստովանում է իր մի շարք սխալները և Մուկդենի անաջողութեան ամբողջ մեղքը իր վրա է առնում։ Պօրտ-Արթուրի անկման լուրը տանալուց յետոյ,—պատմում է նա,—զինուորական խորհուրդ գումարվեց, որտեղ հրամանատարները առաջարկում էին իրանց ծրագիրները։ Գրիպենբերգը առաջարկում է թիկունքից յարձակում գործելու մի շարք յանդուգն ծրագիրներ Եանտայի վրա։ Այդ ծրագիրը մերժվից շնորհիւ նրա չափազանց վտանգաւոր լինելու։ Այն ժամանակ գենեռալ Գրիպենբերգը լիակատար յուսահատութեան մէջ ընկաւ և յայտարարեց, որ պատերազմը պէտք է հաշտ տանուլ տուած, և առաջարկեց յետ նահանջել դէպի Խարբին, Վլադիվաստոկ և պաշտպանել գոնէ այդ կէտերը։ Այդպէս էլ եղաւ վերջում։

(«Пет. Лист.»)

ՈՒՄԱՆՈՂԱՅԱՆ ՐԵՖԵՐԵՆԴՈՒՄԸ

Մօսկվայի ժողովուրդը արտասանեց իր դատավճիռը հին բժիշկի և նրա ստեղծած քաղաքական կարգերի դէմ։

Ու Մօսկվայի ուսանողութիւնը հետևեց նոյն օրինակին և 1907 թ-ի փետրվարի 3-ին իր բեֆերենդումով խիստ հարուած իջեցրեց հասարակական աւանդական հին կարգերին։

Այդ կատարված փաստը մեծ նշանակութիւն ունի ոչ միայն համալսարանական-ակադեմիական կեանքի համար, այլ և հասարակական։

Ռուսաց ուսանողութիւնը երկար տարիներ անադին դեր է խաղացել հասարակական կեանքի մէջ, ազատագրական շարժման խիզախ մարտնչողն է եղել և իր ամբողջութեամբ հանդիսանում էր իբրև մի օպոզիցիոն ոյժ յաճախակի բռնկումներով արտայայտելով ֆէոդալական բիժիմի ճնշումների տակ տառապող, իրաւազուրկ ռուս ժողովրդի ու հասարակութեան խուլ արտունջները։

Ութսունական թվականներից յետոյ ուսանողութիւնը իր ներքին գործերում ճանաչում էր միայն մի հեղինակաւոր մարմին, այն է ուսանողական ընդհանուր ժողովը (общая сходка)։

Այդ ինքնավարական աւանդական հին ձևը, յեղափոխական հովերի ներշնչմամբ, վերջին տարիներս սկսեց երևան հանել իր վնասակար կողմերը, տալով մի շարք պատահական ու կամայական որոշումներ, որոնց թելադրողը, առհասարակ, լինում էր ոչ թէ ուսանողութեան մեծամասնութիւնը, այլ յանդուգն փոքրամասնութիւնը։ Այդպիսով ուսանողութեան մէջ մտած այդ հոսանքը ստեղծում էր սպառնալի դրութիւն նոյն իսկ համալսարանի գոյութեան համար։

Գիտութեան տաճարը—համալսարանը դրա շնորհիւ ստիպված էր ծառայելու ոչ թէ իր իսկական նպատակներին, այլ կողմնակի գործի և քաղաքական միտումների համար։

Համալսարանի մէջ ստեղծված իրերի այդ անՕրմալ, քաոսական վիճակը չէր կարող տրտունջներ չառաջացնել հէնց իր՝ ուսանողութեան շարքերում. զժգոհների թիւը հետզհետէ սկսում է աւելանալ և ներկայ ուսումնական տարվայ մէջ նա հանդէս է գալիս իբրև մի կազմակերպված ընդդիմադիր ոյժ։

Մինչև ներկայ ուսումնական տարին ակադեմիական կեանքի մէջ դեր էին խաղում միայն ծայրայեղ ձախակողմեան կուսակցութիւնները, սակայն քաղաքական վերջին անցքերի ազդեցութեան տակ ուսանողութիւնն էլ ենթարկվում է շերտաւորման նոյն պրոցեսին, և հանդէս են գալիս ուրիշ կուսակցութիւններ էլ, գլխաւորապէս իրբև հակառակորդ առաջիններին։ Վերջիններիս մէջ առաջնակարգ տեղ է գրաւում «Ժողովրդական ազատութեան» կուսակցութեան ֆրակցիան, որ եռանդուն կերպով դաղափարական կռիւ էր մղում ընդհանուր ժողովի և նրա դեկավար խմբակի ոտնձգութիւնների դէմ։ Այդ պայքարը վերջին օրերս աւելի կրկնապատկվեց, երբ ուսանողական փոքրամասնութիւնը ուղղակի դատարանական դերը բռնեց և ուզեց ուսանողական ընդհանուր ժողովին օրէնսդրական իշխանութիւն էլ տալ։

Ժողովրդական ազատութեան ուսանողական ֆրակցիան, որ առանց այն էլ դժգոհ էր ընդհանուր ժողովի այդ դերից, ամեն ջանք գործ դրեց ընդհանուր ժողովի օրէնսդրական նշանակութեան հարցը ենթարկելու ամբողջ ուսանողութեան որոշմանը, նրա «բեֆերենդումին»։ Եւ հասաւ իր նպատակին։

Այդ հարցի լուծման համար Մօսկվայի համալսարանի ուսանողութեան մէջ երկու զօրեղ հոսանք պայքարում էին իրար դէմ. մի կողմում կանգնած էին բոլոր ձախակողմեան միացեալ ծայրայեղ տարրերը, իսկ նրանց հակառակ կողմում՝ համալսարանի կուլտուրական կոչման անունով ապարդեղ մտած «Ժողովրդական ազատութեան» ֆրակցիան և նրա հետ միասին ուսանողութեան գործունեայ մասը։

Վերջինս այդ նպատակով բաց թողած իր Թուղթակում ասում է. «Ժողովրդական ազատութեան ֆրակցիան համալսարանում վարուց է կռիւ մղում այդ հաստատութեան դէմ, բացատրելով ժողովի օրէնսդրական և հանրապարտադիր նշանակութիւնն ամբողջ ուսանողութեան համար։ Մեր ակադեմիական կեանքը շատ վնասներ և պառակտումներ է ունեցել, յաճախ սակաւամարդ ժողովների որոշումների շնորհիւ, որոնցով բռնադատում էին իսկական մեծամասնութեան կամքն ու իրաւունքը»։

Եւ ահա փետրվարի 3-ի բեֆերենդումը վերջ տուեց ուսանողական ընդհանուր ժողովի օրէնսդրական նշանակութեանը և տիրապետութեանը, պահպանելով միայն նրա ադիտացիայի բնաւորութիւնը։

Այն տեղեկութիւններից, որ համալսարանի կենտրոնական մարմինը ստացել է բեկորից, երևում է, որ բեֆերենդումին մասնակցող, ձայն տուող ուսանողների թիւը եղել է ընդամենը 4190 հոգի, այսինքն ուսանողութեան կէս մասից աւելին, որի հիման վրա բեֆերենդումը օրինական է համարվում։

Ձայնատուութեան հետևանքը ցոյց է տուել, որ ընդհանուր ժողովին օրէնսդրական իրաւունք տալու համար ձայն են տուել 2051 հոգի, իսկ հակառակ՝ 2139 հոգի։

Այդպիսով «Ժողովրդական ազատութեան» ֆրակցիան յաղթող է հանդիսանում, կանգնեցնելով համալսարանը աւելի հաստատուն հողի վրա և զրկելով հեղեմոնիայից այն փոքրամասնութիւնը, որ համալսարանի ինքնուրոյն նշանակութիւնը չընդունելով հանդերձ՝ իրան թոյլ էր տալիս ընդհանուր ժողովի օգնութեամբ խօսել ամբողջ ուսանողութեան անունից։

Այդ բեֆերենդումով համալսարանական կեանքի մէջ մտնում է մի խոշոր բարեփոխութիւն, որ ընդունակ կը լինի վերացնելու տիրող անարխիան և տալու նրան իր արժանավայել դիրքը։

Լ. Դանիէլեան

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

(«Արեգնազան» օպերետ-հէքեաթ)։

I

Երկուշաբթի, փետրվարի 12-ին, հայ դրամատիկական խումբը ներկայացրեց «Արեգնազան» օպերետ-հէքեաթը 5 պատկերով։

«Արեգնազանը» առաջին անգամն է դրվում հայկական բեմի վրա։ Նրա նիւթը վերցված է Ղ. Աղայեանի նոյնանուն հէքեաթից։ Բեմի համար նրան յարմարեցրել է Արաքսեան։ Երաժշտական մասը կազմել է Գ. Միրզոյեան։

Երևում էր, որ բաւական աշխատանք է գործ դրված եղել ներկայացման վրա, բայց և այնպէս նա չը կարողացաւ գոհացնել դեղարուեստի պահանջները։

Թեմայի մշակութիւնը պէտք է կատարվէր ուրիշ ոգով և ուղղութեամբ։ Բնած աշխարհը, անմահական ջուրը, չար կախարդի թագաւորութեան վերջանալը, Արեգի յաղթանակը մատակարարում են նիւթ դաղափարական պատկերացումների և պայքարի համար։

Պիեսի մէջ չափազանց թոյլ է զարգացրած այն դրամատիկան տարրը, որ կայ հէքեաթի մէջ և որը կարող էր հետաքրքրական կերպով մշակվել։

Երաժշտութիւնը չէր պահպանված որոշ տոնի վրա և եղանակները չէին համապատասխանում արտադրութիւններին։ Երգերի մէջ կային աշղված կտորներ, ախորժակաբեր և ընթող տողեր, իսկ ամբողջութիւնը կրում էր բռնադրսի գործի տպաւորութիւն։

Սօլո երգողները շեղվում էին երաժշտական նուագախմբի ներդաշնակութիւնից, և առաջ էր գալիս ձայների անախորժ զուգախառնութիւն։

Տեսարանները ընդհանրապէս աջող էին, մանաւանդ գեղեցիկ էր չորրորդ գործողութիւնը, որ ներկայացնում է քնած աշխարհը և նրա արթնանալը։

Արաքսեան, որ կատարում էր Արմանի դերը, միևնոյն ժամանակ և դնում էր իր բենեֆիսը, Հասարակութիւնը ողջունեց նրան ծափահարութիւններով և տուեց նրան պսակ։ Նա առհասարակ լաւ և ընթող կատարեց իր դերը։ Արմանի դերի մէջ նա ներկայացրեց խելօք, կատակարան, իր հաշիները լաւ հասկացող ծերունու։

Սիրանոյշ, որ կատարում էր Արեգնազանի դերը, խաղում էր խելացի և աշխոյժ կերպով։ Երգը դերասանուհու թոյլ կողմն էր։ Նա արտասանում էր զեղեցիկ։

Տիկին Նոնիկեան իր փոքրիկ դերը կատարեց և երգեց բաւարար։ Տիկին Աւետեանի ձայնը չէր լսվում։ Տիկին Մելիքեան իր դժգոյն և փոքրիկ դերի մէջ վատ չէր։ Տիկին Վարդուհի կախարդի դերը կատարեց աջող կերպով։

Աբելեան քնած աշխարհի թագաւորի դերում դժուար կացութեան մէջ էր։ Նա շատ քիչ նիւթ ունէր այդ դերից մի բան շինելու։

Ցարութիւնեան անդոյն դեր ունէր։ Երկրորդ գործողութեան մէջ նա լաւ էր, բայց այն տեսարանում, երբ նրա աղջիկը կենդանանում է, նա իբրև սիրող հայր չափազանց անտարբեր էր դէպի կատարվող հրաշքը։

Ալտեան ծաղրածուի դերում թոյլ տպաւորութիւն թողեց։ Դերը անշուշտ և անընթող էր։ Երգը զուրկ էր ծաղրածուի բնաւորութիւնից։

Երգեցիկ խօրը վատ չէր սովորել երգերը, բայց չափը այնուամենայնիւ շեղվում էր և կանոնաւոր ընթացքից։

Անկասկած, եթէ «Արեգնազան» պիեսը անուանված լինէր մանկական, նրա հետ կարելի էր աւելի հեշտութեամբ հաշվել, բայց իբրև աւելի մեծ յաւակնութեամբ պիես, նա կարօտ է հիմնովին վերամշակութեան։

Թատրոնը հաճարեա լիքն էր։ Դատարկ էին միայն առաջին կարգերի աթոռները։

Սիրող

Պ. ՎԱՀԷԻ «Ի՞ՆՉ ԵՆ ԱՍՈՒՄ ԹԻՒԵՐԸ»

«Ժամանակի» երդուեալ հաւատարմատար պ. Վահէն դուրս է եկել մի շարք յօդուածներով, ապացուցանելու, որ ընդհանրական պայքարից «ձախական յաղթանակը սօց.-դեմօկրատները տարան, իսկ բաբոյական յաղթութիւնը ամենամնայնիւ Հ. Յ. Դ. կողմն է»։

Որպէսզի իր այս զլխաւոր թեզը ապացուցանէ, պ. Վահէն հմուտ փօկուսնիկի նման «Ժամանակի» ընթերցողների առաջ ներկայացուցել է տալիս, որի նպատակն է համոզել վերջիններիս, որ սօց.-դեմ. եթէ յաղթութիւն տարել էլ են Թիֆլիսում—դա նախ՝ մի այնպիսի յաղթութիւն է, որ համահաւասար է բարոյական պարտութեան, ապա՝ որ այդ ձևական յաղթութիւնը ամբողջովին բացատրվում է սօց.-դեմօկրատների կատարած «զեղծումներով, կեղծիքներով ու պրովոկացիայով»։ «Իւրաքանչիւր կուսակցութեան համար՝ ասում է պ. Վահէն,—նշանակութիւն ունի, թէ իր ազդեցութիւնը ինչ չափով աճում էր։ Եթէ մենք մօտենալու լինենք ընտրութիւնների հետևանքին այդ տեսակէտից, շարունակում է պ. յօդուածագիրը, մենք կը տեսնենք, որ սօց.-դեմօկրատներին ձայն տուողների թիւը ոչ միայն չէ աւելացել համեմատաբար անցեալ տարվա, այլ և պակասել է։ Անցեալ տարվայ ընտրութիւնների ժամանակ սօց.-դեմ. ստացել են 8387 ձ., իսկ այս տարի 7971 ձայն միայն. զանազանութիւնը 416 ձ.։ Այդ դեռ ոչինչ, բայց չէ՞ որ այս տարվայ ընտրողների թիւը շատացել է 34503—29523 =4880 ձայնով։ Անցեալ տարվայ ընտրութիւններին մասնակցել են 12064 հ., իսկ այժմ 15777 հ.։ Ասել է, թէ «այս տարի աւելացած 3770 մասնակցողներից սօց.-դ. ոչ միայն ոչ մի ձայն չեն ստացել, այլև իրանց ունեցածից էլ կորցրել են 400—500 ձ.»։ Հետևաբար Թիֆլիսի այս տարվայ ընտրութիւնները ցոյց են տալիս, որ սօց.-դեմօկրատիայի ոյժը չէ աւելանում, այլ պակասում է։

Բայց տեսնենք, իրօք այդպէ՞ս են խօսում թվերը։

Առաջին ընտրութիւնների ժամանակ ձայն ունեցողների 40% է մասնակցել ընտրութիւններին, իսկ երկրորդին 45,7%։ Ուրեմն եթէ սօց.-դեմօկրատիայի ազդեցութիւնը մընար նոյնը, ինչպէս անցեալ տարի, այն ժամանակ նա պէտք է ստանար հետևեալ թիւերը.

Ստացել է	պէտք է ստանար	ստացել է	տարբեր
1906	1907	1907	
8387 ձ.	10965	7971 ձ.	2994
69,50%	69,50%	50%	19,50%

Սօց.-դեմ. այս ընտրութիւններին կորցրել է 2994 ձայն համեմատաբար անցեալ տարվայ ստացած ձայներին, այՀէ առաջ ունենալով և ձայն ունեցողների քանակի բարձրանալը։ Արդ, ուր են գնացել այդ 2994 ձայները։ Արդեօք իրօք սօց.-դեմօկրատիան կորցրել է իր այդ անցեալ տարվայ ձայները։ Բաւական էր ամենաչնչին բաբեխղմութիւնը, որպէսզի պարզվէր պ. Վահէի համար այդ եւրեղութի իսկական պատճառը։ Բայց պ. Վահէի նպատակը չէ լուրջ անալիզի ենթարկել թիւերը և ըստ այնմ յանգել որոշ եզրակացութիւնների, չը վախենալով հանդերձ մերկ ճշմարտութիւնից։ Ընդհակառակը պ. Վահէն à priori նպատակ է դրել իրան ապացուցանելու, բաբեխղմութեան ինչ գնով որ լինի, որ սօց.-դեմ. ձեռքեն յաղթութիւն է տարել, բայց բարոյական յաղթութիւնը Հ. Յ. Դաշն. կողմն է։

Անցեալ ընտրութիւններին, ինչպէս յայտնի է, դաշնակցականները ըստիսօ էին արել Գեռատական Դումային (բայց ինչից դրված, մենք մինչև այժմս այդ հանելուկը չենք հասկացել). նոյնպէս և այսպէս կոչված Հնչակեան «սօց.-դեմօկրատները»։ Սակայն, չը նայած Դաշնակցութեան բոյկոտին, հայ բուրժուական տարրերը մասնակցում էին ընտրութիւններին և ձայն էին տալիս պայքարող կուսակցութիւններից սրան կամ նրան։ Իսկ որովհետև անցեալ տարվայ ընտրութիւններին մասնակցող կուսակցութիւններից գլխաւորներն էին սօց.-դեմօկրատիան ու կադետները, ուստի հայ ընտրողները պէտք է ձայն տային կամ կադետներին կամ սօց.-դեմօկրատներին։ Եւ, իսկապէս, այդպէս էլ եղել է։ Այսպէս կոչված «հայ քրիստոնեաներն» մի մասը տուել է իր քուէները կադետներին, մի ուրիշ՝ աւելի սու

անպէտք, բոլորն էլ և՛ կան, և՛ չը կան, բայց իրար արամագծօրէն հակառակ. մի խօսքով խայտառակութիւն։ Խումբը պէտք է զգայել մի նոր ծլագրին դիմել, մէկ հին ու փտած կանոնադրութեան, երբեմն էլ ոչ նրան, այլ իր բեկին։

Վերջապէս գալիս է հոկտեմբերեան կօնգրեսը, ասենք այդ ոչինչ, դա շուտ չբացաւ մէջտեղից և կրաւ անհետանալ, և մեր դպրոցը այդ չարիքին չենթարկվեց։ Բայց դրան հետևից առաջ՝ որդի «շրջաբերական հրամանը», որին սիրով ընդունեց մեր հոգաբարձութիւնը և մէջտեղ գալուց 74-ի կանոնադրութիւնը ու նրա հիման մէջտեղ բերեց «Թողնում ենք անհետանալ» և «ի տնօրինութիւն մեր» գոնարները. որ նրանք այնքան փութիկոտութեամբ հրամցրին ուսուցչական խմբին, հիմնվելով առաջնորդի շրջաբերական հրամանի վրա։ Բայց, բայց, այդ 74-ի կանոնադրութիւնը հոգաբարձուներին տանում է մինչև հաշուի նստելը միայն, յետոյ էլ շատ շատ բերում է իրրև մանկէկներ և բազմեցնում է աշակերտական քննութիւններին. այսպէս է թէ ոչ. թող որ նա, այդ փտած կանոնադրութիւնը, տասնեակ ուսուցիչներին շարում է թեմական տեսչի մատների ծայրին։ Էլ այն ժամանակ «ի տնօրինութիւն մերը» աքսորվում է Սիբիր, ինչպէս որ հեշտութեամբ ցանկացան աքսորել ժրադղա «խան ժողովները»։

Եւ ահա արանից էլ պատկեր ստացվեց. (փակագծի մէջ ասենք, որ տեսուչը ամիսներից է վեր հիանդ ու խնամող անձերից զուրկ տառապում է)... տացվում է մի տիպիկ մինիատիւր խայտառակ քասի.—զբաղողները առանց տեսչի հսկողութեան են. հոգաբարձուները ոչ մի հետաքրքրութիւն չեն ներկայացնում դպրոցների ուսումնական մասին. խումբը, աւելի ճիշտ կէս խումբը յուզվեց, միջոցներ ձեռք առաւ բարեւոքելու իրերի դրութիւնը, ժողովներ կազմեց, տեսուչը հիւանդ է, դիմից հոգաբարձուներին. երեան և կաւ առաջնորդի տեսրաձայակ հրամանը, որից վարակվեցին և հոգաբարձուները ու բիւրօկրատիկ հրաժանները գրելու հաւաս ունեցան... Կէս խումբը (30 հոգուց միայն 15 ուսուցիչներ և ուսուցչուհիներ են, որ հետաքրքրվում են դպրոցների վիճակով) էլի յուզվեց, էլի յուսահատվեց ու մի պաշտօնական գրութեամբ յայտնեց հոգաբարձուներին (տեսուչը ծանր հիանդ է), որ ինքը այսուհետև լոկ գոտաստ է, բոլոր անկարգութիւնների բարոյական պատասխանատուութիւնը թողնում է իր բարի ցանկութիւններին խոչընդոտ հանդիսացողների վրա և ձեռները լուանում է։ Նրանք միտք ունեն ծլական ժողովին մի պատճառաբանված ազգ տալ, յետոյ և լրագրութեան մէջ յայտարարել։

Հիանալի պատկեր է, չէ՞, ընթերցող։ Եւ մեր ոը դպրոցները չեն ներկայացնում այս պատկերը։ Եթէ սրա վրա աւելացնենք և ուսումնական կոպիտ թերութիւնները, առարկների ուանդման տսակի քաշքշուկները, բարբարոս խեղաթիւրումները, որոնք սովորական են մեր շատ դպրոցներում, այն ժամանակ արդիւնքը էլ աւելի բարեյաջող կը լինի։

Իրրև ապացոյց, որ մեզանում կոչմանբարձրութեան վրա կանգնած ուսուցիչներ քիչ կան, հրատ է և նրանից, որ զանազան անիմաստ ու վնասակար հրամանների դէմ բողոքող տարրերը շատ չնչին են. մի Ախալցխա, մի Ալէքսանդրոպոլ, մի Բաթում իրանց կիսատ բողոքներով ինքնաբնութեան շատ չընչնչութիւն են ներկայացնում, և, բնականաբար, դատարկ էլ կորչում են այդ նուազուն ձայները։

Մեր դպրոցները, այնքան խանդավառութեամբ վերատացած դպրոցները, իրար ետևից գլորում են անարդիւն տարիներ. և այդ՝ շնորհիւ մեր տհասութեան, մեր քաղաքական անհասութեան, որի պատճառով այդպիսի մեծ և կարևոր գործեր յանձնվում են ետ մընացած իշխանաւորների անմիտ կարգադրութիւնների. իսկ դրա հետևանքը ներկայումս սեղմում տիրող դպրոցական հատատութիւնների եռանիաց և կրկնայի առաջադիմութիւն։

Եւ սրա համար ով է ցաւում, ով է տուժում։

Ի՞նչ պէտք է անել սրանից յետոյ. դատնալ խաղալիք պատահական անմտութիւններին, թէ կազմակերպվել և գործ կատարել։ Տեսէք, ահա 74-ի կանոնադրութեամբ շուտով առաջնորդը կը նշանակի թեմական տեսուչ, թէև մի քանի օր առաջ մի կօնդակ այդ իրաւունքը ուրիշների էր յանձնում։ Սա արդեօք մի ծաղր չէ։

Բայց մինչև երբ խաղալիք դառնալ և անուրոշութիւնների մէջ նահատակել մի ընդարձակ ու կենսական գործ, ինչպիսին դպրոցական գործն է։

Մինչև երբ շարունակվի այս շլեա-փլաւը, այս քաոսը։ Այս հարցերին երևի պատասխան կը տան կօնդակները, առաջնորդական հրամանները, յետոյ և գաւառագիտուն հոգաբարձուներն ու վարժապետները։

Գալուստ

Ախալցխա, 5 փետրվարի

ԱՅԼ Է ՃԵՄԱՐԱՆԸ ԱՅՍ ՏԱՐԻ

(Պատասխան Allons-ին)

—

Ձեր առաջին սայլող թղթակցութիւնը ճեմարանի դ.-ական գիւղերի մասին արդէն ցոյց է տալիս թէ ինչ գոյնի մարդ եք դուք և թէ ինչպէս եք գրում ու «պատասխանում»։ Եւ ուրեմն ինչպէս պատասխանել ձեզպէսներին, որոնց համար միայն մի սկզբունք կայ.—նպատակը արդարացնում է միջոցները։

Բայց պէտք է պատասխանել սպասող ընթերցողին. նա կարդում է և ձեր ինսինուացիաներն ու զատարկաբանութիւնները։

Դուք չամաչեցիք սուտ և ճեմարանի ներկայ դէպքերին էլ կուսակցական գոյն տալ. դուք խաղեցիք և՛ Դ.-թեան և նրա հանդուցեալ դիւրներին, և արդէն մոլորեցրիք «Հասանք» խմբագրութեան իր կուսակցական կոչի թեպերութեան զոհաբերները շարելու։

Եւ ահա այժմ էլ բառախաղութեամբ ու երևակայական խնդրանքներով իբր թէ պատասխանում էք մեր յօդուածին։

Բառախաղութեամբ ենք ասում, որովհետև մեր «այլ է ճեմարանը այս տարի և այլ էր նա անցեալ տարի» ընծրող և ճշգրիտ դարձուածքը թութակօրէն անվերջ հոլովելը պատասխանել էք կարծում։

Երևակայական խնդրանքներ ենք ասում, որովհետև կուրանալով ճեմարանի ներկայ ազատ կարգերի առաջ, որ ընդհանուր առմամբ ներկայացրել եմ յօդուածիս մէջ, դուք ճեմարանական ոգեկոչի ոգեկոչի ծիծաղելի առարկութիւններ էք տնում, որ մէկը երևի մի օր «ձի է նստել» (հէնց Դ.-թեան) և հարևան գիւղը գնացել, որ Դ. լսարանցիք կարված ամեն մի շրջանից մի երկու անգամ ընկերներով զուարճացել են տոն երեկոներին ջուրթակով և դափով և..., ձեր փոխարէն կաւելացնենք, որ մի օր էլ չեն եկել ձեր երևելի «քննադատութիւնը» լսելու... որ մէկը մի օր ուշ է արթնացել, որ զրպանները աւելացել են և այլն և այլն, և այլն անմանփատեր...

Ահա ձեր լուրջ հերքումներն ու երևելի «պատասխանը»։ Մի՞թէ իրաւունք չունենք այդ մանկական բարբաջանքներ, երեխայական դատողութիւններ ու խնդրանքներ անուանելու։

Ծիծաղելի էք։

Ձեր եղանակով պատասխանելու համար պէտք էր ձեր հուչակաւոր խմբակի գիշերային անվերջ հանդէսների վարքագրութիւնը տալ, որ մեր բանը չէ, և որ գուցէ բաւական հետաքրքիր ու զուարճալի լիներ, բայց մենք մամուլը շատ բարձր ենք գնահատում, որ նրա մէջ տանը, օր., ելեքտրական լուսաւորութեան ցնսակար դերը։

Գալով ձեր այն առարկութեան՝ թէ ինչու ենք այս տարվայ յուզումը թեթև անուանում, իսկ անցեալ տարվայ մէկ աշակերտի թղթակցելու համար արձակվելը ոչ՝ կը հասկացնենք ձեզ, որ նախ՝ անարդարութիւնը կամ արդարութիւնը քանակով չեն պայմանաորվում և երկրորդ՝ որ այս տարվայ արձակվածները արժանի էին այդ պատժին, իրրև անմաքուր տարրեր հին կարգերով հոխանուրված, որ մենք արդէն ցոյց ենք տուել, իսկ 18 հոգիգ (ըստ «Հասանքի» № 47) տղայարար և աղջտարար (!) հեռացաք հակառակ վարչութեան կամքի, լսելով և ոչ մի խորհրդի, այնպէս որ իզուր էք ձեր թիւն աւելացնում ժեծացնելու և տպաւորութեան համար։

Հերքենք և մի այլ վայնասուն՝ թէ ինչպէս «առանց քննութեան» է հեռացել պահանջել ժեծամասնութիւնը. նախ՝ ասենք, որ 24-ով էլ սկզբում ոչ մի քննութիւն չէիք ընդունում և նրանք ձեր տաքարկն ընդունեցին, որպէսզի արձակվածներին հեռացնեն—ապա ինչ կուզի լինի, ինչպէս որ դուք էլ անպայման աշակերտ ճանաչել էիք պահանջում և չէիք համաձայնվում, որ մինչև քննութիւնը նրանք աշակերտ չը ճանաչվեն, ինչպէս վարչութիւնն էր ուզում։ Ահա թէ ինչու։ համաձայնութիւն չի եղել այդ կէտում։ Հեռուից լսողի համար դա մի կարգ առարկութիւն է երևում. տեսնենք. մանկավարժական ժողովի արձակման պատճառաբանութիւնը լսելուց յետոյ՝ քննութեան պահանջ աշակերտութիւնը կը զգար միայն այն դէպքում, երբ նա անծանօթ լիներ փաստերին, եթէ հէնց նրա աչքի առաջ, միևնոյն շէնքում կատարված չը լիներ, և եթէ դրանց մասին նա հէնց կատարվելու շրջանում լսած և քննութեան առած չը լիներ, այնպէս որ, երբ նա լսեց ժողովի պատճառները՝ նրա համար ամեն ինչ պարզ էր։ Ահա թէ ինչու մեծամասնութիւնը քննութեան կարիք այս տարի չը զգաց։

Իսկ անցեալ տարի ամբողջ հարցը բոլորովին անայլ պսեվդոնիմի հարցն էր։ Եթէ վարչութիւնը գտել էր (?), որ այդ պսեվդոնիմով թղթակցողը իր արձակած աշակերտն է՝ նա պէտք է ցոյց տար, ապացուցանէր աշակերտութիւնն։ Ահա թէ ինչու անցեալ տարվայ դէպքի քննութեան կարիք կար։

Անցեալ տարի վարչութիւնը քննութեան չը համաձայնեց, որովհետև վախենում էր. իսկ այս տարի նա համաձայնեց, բայց սկզբում զուզ՝ ապա և մեծամասնութիւնը ձեր պայմանին չը համաձայնեց։

Եւ եթէ՝ վերջապէս՝ «առանց քննութեան» էր, ինչու արձակված աշակերտին անմեղ ճանաչեց և պահից ճեմարանում։

Եւ դուք մեր այս երկու դէպքերի նկատմամբ տարբեր դիրք բռնելը հակասութիւն էք համարում և առանց կարմրելու անձնական հաշիւներ էք ուզում վերագրել մեր այս տարվայ դիրքին, երբ արձակվածներից մէկի հետ մի խօսք անգամ չենք փոխարինել մինչև այժմ։ Բացի այդ դուք նաև «պատասխարաբ» էք անուանում նրան պաշտպանելը, իսկ ձեզ՝ ոչ։ Թէ որքան է այդ «պատասխարաբ» և թէ ինչու իրրև կողմնակի, ոչ շահագրգիռ անձնատ մէկ դէպքում պահանջում ենք արձակել, իսկ միւս դէպքում—ոչ, դա արդէն պարզ է մեր գրածներից. իսկ ինչ անուն տալ, ինչպէս բացատրել այն, որ մէկը իր գլխին դատաւոր է լինում։ Ի՞նչպէս է, որ դուք ձեզ պաշտպան էք հանդիսանում մամուլի մէջ։ Գ. Allons, պարզ է՝ թէ ով էք դուք. ուստի թոյլ տուէք շատ տեղին և ուշագրաւ նկատողութեամբ երևան հանելու ձեր ով լինելը, երբ դուք միանգամայն անտեղի շեշտում էք մեր ով լինելը—«դուք, Գ. լսարանցիքդ»... Զէ՞ որ արձակված Փիլոսեանին պաշտպանողդ՝ հէնց ինքդ արձակված Վաթեան-Փիլոսեանն էք։ Ոչինչ, երևի դա էլ է «պատասխարաբ»... Պաշտպանեցէք ձեր դատը։ Լաւ անաչառ դատաւոր կը լինէք։

Վերևում ասացինք, որ ձեր «պատասխանը» իսկ մանկական թոթովանքներ են։ Եւ դուք կարծում էք՝ թէ պսեվդոնիմի այդ լարախութեամբ դուք ցոյց տուիք, որ ճեմարանում ազատութիւններ չը կան։ Որպէսզի ցոյց տաք, որ այս տարվայ կարգերը անցեալ տարվայ կարգերից չեն տարբերվում,—որ այլ չէ ճեմարանը այս տարի,—պէտք է այդ ապացուցանէք փաստերով և ոչ թէ ձեր անձնական հաշիւներ ու տպաւորութիւններով։

Այսքան ժամանակ գոռում-գոչիւն, վայնասուն էք բարձրացրել՝ թէ ազատութիւն չը կայ, ժամանդ խօսքի ազատութիւն... Բայց երբէք նեղութիւն չէք կրում փաստեր բերելու։ Միայր վայասուն ու ընդհանուր, չէզոք իմաստով բառերը ոչինչ չեն ասում։ Ասացէք, վերջապէս, թէ դուք, նորաբոյս և ինքնակոչ «ծայրայեղներդ», ի՞նչ կարգեր էիք քննադատում, ի՞նչ ազատութիւն էիք պահանջում, որ ժեծամասնութիւն, ձեզ հետ չը միացաւ։ Ձեզ համար վերապահելով ճախակողմեան անունը և ներկայիս մօդային բառերից, ուստեղի զազաթիւնները։ Թէև ներկայ կաբինետի անդամները չէին սպասում, որ այնքան գործազրված ջանքերից յետոյ Դումա կը մտնեն «աշխատանքի անընդունակ» տարրեր, այնուամենայնիւ մինիստրները գոհ են այն հանգամանքից, որ Դումայում խորը թիւ են կազմում և ծայրայեղ աշակողմանները։ Մինիստրները առանձին բաւականութիւն էին յայտնում Կիեվի, Բէլոստոկի և Կազանի ընտրութիւնների առիթով, ուր անցել են «աշխատանքի ընդունակ» մարդիկ, որոնք հարկաւոր դէպքում կարող կը լինեն պաշտպանել թէ իրանց և թէ մինիստրներին։ Ապա յարուցվել է այն հարցը թէ ինչ վերք պէտք է բռնէ կաբինետը Դումայում, ի նկատի առնելով, որ ձախից խիստ յարձակումներ են թափվելու իր վրա։ Մինիստրներից ոմանք պաշտպանում էին պաշտպանողական դիրք բռնելու տակտիկան, իսկ միւսները՝ յարձակողական։ Վերջին կարծիքին միացել է և պրեմիէր Ստոլիպինը։ Վճռված է կանգնել խիստ օրինական հողի վրա և ոչ մի աւելորդ հակաճառութիւններ չտալ։ Բացի դրանից կարծիքներ յայտ ունի, որ կենտրոնի և ծայրայեղ աշակողմանների գոյութիւնը բաւականաչափ կը դիւրացնէ իր դժուարին գործը բացատրվելու Դումայի հետ, որովհետև պաակտում կառաջանայ Դումայի անդամների մէջ և այդպիսով պատգամաւորների եռանդը ուղղված կը լինի ներքին պատերազմի կողմը։ Պետերբուրգի ընտրութիւնների վերաբերմամբ մինիստրները առանձին բաւականութիւն էին յայտնում Կիեվի, Բէլոստոկի և Կազանի ընտրութիւնների առիթով, ուր անցել են «աշխատանքի ընդունակ» մարդկանց, որոնք հարկաւոր դէպքում կարող կը լինեն պաշտպանել թէ իրանց և թէ մինիստրներին։ Ապա յարուցվել է այն հարցը թէ ինչ վերք պէտք է բռնէ կաբինետը Դումայում, ի նկատի առնելով, որ ձախից խիստ յարձակումներ են թափվելու իր վրա։ Մինիստրներից ոմանք պաշտպանում էին պաշտպանողական դիրք բռնելու տակտիկան, իսկ միւսները՝ յարձակողական։ Վերջին կարծիքին միացել է և պրեմիէր Ստոլիպինը։ Վճռված է կանգնել խիստ օրինական հողի վրա և ոչ մի աւելորդ հակաճառութիւններ չտալ։ Բացի դրանից կարծիքներ յայտ ունի, որ կենտրոնի և ծայրայեղ աշակողմանների գոյութիւնը բաւականաչափ կը դիւրացնէ իր դժուարին գործը բացատրվելու Դումայի հետ, որովհետև պաակտում կառաջանայ Դումայի անդամների մէջ և այդպիսով պատգամաւորների եռանդը ուղղված կը լինի ներքին պատերազմի կողմը։ Պետերբուրգի ընտրութիւնների վերաբերմամբ մինիստրները առանձին բաւականութիւն էին յայտնում Կիեվի, Բէլոստոկի և Կազանի ընտրութիւնների առիթով, ուր անցել են «աշխատանքի ընդունակ» մարդկանց, որոնք հարկաւոր դէպքում կարող կը լինեն պաշտպանել թէ իրանց և թէ մինիստրներին։ Ապա յարուցվել է այն հարցը թէ ինչ վերք պէտք է բռնէ կաբինետը Դումայում, ի նկատի առնելով, որ ձախից խիստ յարձակումներ են թափվելու իր վրա։ Մինիստրներից ոմանք պաշտպանում էին պաշտպանողական դիրք բռնելու տակտիկան, իսկ միւսները՝ յարձակողական։ Վերջին կարծիքին միացել է և պրեմիէր Ստոլիպինը։ Վճռված է կանգնել խիստ օրինական հողի վրա և ոչ մի աւելորդ հակաճառութիւններ չտալ։ Բացի դրանից կարծիքներ յայտ ունի, որ կենտրոնի և ծայրայեղ աշակողմանների գոյութիւնը բաւականաչափ կը դիւրացնէ իր դժուարին գործը բացատրվելու Դումայի հետ, որովհետև պաակտում կառաջանայ Դումայի անդամների մէջ և այդպիսով պատգամաւորների եռանդը ուղղված կը լինի ներքին պատերազմի կողմը։ Պետերբուրգի ընտրութիւնների վերաբերմամբ մինիստրները առանձին բաւականութիւն էին յայտնում Կիեվի, Բէլոստոկի և Կազանի ընտրութիւնների առիթով, ուր անցել են «աշխատանքի ընդունակ» մարդիկ

Ախալցխայից «Закавказье» լրագրին գրում են, որ փետրվարի 11-ին, ցերեկվայ ժամը 3-ին քաղաքի կենտրոնում, պանդոկի մօտ ընդհարում է տեղի ունենում Թշնամի կուսակցութիւնների միջև։ Նրանք բանում են կատաղի կրակ ատրճանակներից, որը շատ մեծ անհանգստութիւն է պատճառում քաղաքի բնակիչներին։ Հրացանաձգութեան ժամանակ վիրաւորվում է պատահմամբ անցնող հեծելազօրի մի զինուոր։ Կրակողները փախչում են։ Կասկածով ձերբակալված են մի քանի հոգի։

—

Ախալցխայի գաւառի Ացխուր գիւղում մահմեդականները բացել են տարրական դպրոց։ Զեռնարկված է նոր շէնքի կառուցմանը։ Այդ բարի գործի համար միջոցներ տալիս է ինքը ազգաշնակութիւնը։ Մօտ օրերս շինութեան կառուցումը կաւարտվի և դպրոցը կը սկսէ գործել։

—

Նուխուց «Закавказье» լրագրին հաղորդում են, որ մօտ օրերս այնտեղ կայացել է մահմեդական իգական դպրոցի բացումը։ Այդ դպրոցը բացված է Նուխում յայտնի Միրզա-Ֆարաջա-Պիշնամազ-Զադէի նախաձեռնութեամբ։ Բա թէ նա չորրորդն է Անդրկովկասում գոյութիւն ունեցող իգական դպրոցներից։

—

Բագուից «Закавказье» լրագրին ֆրում են, որ փետրվարի 11-ին, առաւօտեան ժամը 9-ի մօտերը, Նիկոլայէվսկի փողոցում, ուր մշտապէս մեծ երթևեկութիւն է լինում, ինչ որ անյայտ անձնաւորութիւններ յարձակվել են անցնող պարսից դեսպանատան քարտուղար Զավադ-խան Աղայէվի վրա։ Կատաղի կրակ բանալով ատրճանակներից իրանց զոհի վրա, չարագործները փախչում են միայն այն ժամանակ, երբ Աղայէվը, վիրաւորված 4 գնդակներով, ընկնում է արիւնաշաղախ։ Կարծում են, որ յարձակվողները պարսիկներ են և յարձակվել են վրիժառութիւնից դրդված։ Միջոցներ են ձեռք առնված գտնելու և ձերբակալելու մեղաւորներին։

—

Բագուի քաղաքապետին կից գտնվող հեռախոսի բաժանմունքի կառավարչի նոր պաշտօնի համար նշանակված Պետերբուրգի հետախոյզ ոստիկանութեան մէջ ծառայող պ. Լէվկօվը հասել է Բագու և ներկայացել է Բագուի քաղաքապետին և նրա օգնականին։ Տեղական խուզարկու բաժնի կազմը դեռ լիովին կազմակերպված չէ և նրա վերջնական կազմակերպումը յանձնարարված է Լէվկօվին։ Առայժմ հրաւիրված են մի քանի գործակալներ Թիֆլիսից։ («Կ.»)

—

Մօսկվայի համալսարանի ռեկտոր Ա. Ա. Մանուիլովի Պետերբուրգ գնալու պատճառով ռեկտորի պաշտօնավարութիւնը դրված է պրօրեկտոր Դուլեվիչի վրա։

Ներքին գործերի մինիստրութեան կից կազմված Պետական Դումայի ընտրութիւնների վերաբերեալ յատուկ բաժանմունքը իր զեկուցմունքները վերջացնելով փետրվարի 12-ին, այնուհետև ընտրութիւնների վերաբերեալ բոլոր գործերը յանձնելու է Պետական Դումայի դիւանին, որը սկսելու է իր գործունէութիւնը Դումայի գումարումից մի շաբաթ առաջ։

—

Պետերբուրգի Վասիլեվսկի կղզու շրջանի գործազուրկների խորհուրդը, Կանադայից ըստացված տեղեկութիւնների հիման վրա, որ ամերիկական ընկերութիւնը առաջարկում է վարձել 10,000 բանւոր, միաձայն որոշել է առաջարկել քաղաքային խորհրդին վերքննել այդ հարցը և արդեք չը լինել բանւորներ վարձելուն, ի նկատի առնելով, որ ահագին թւով բանւորներ ցանկութիւն են յայտնում առաջարկված պայմաններով գնալ։

—

Ֆ. Ա. Գօլովինը և Մ. Վ. Զելենօկովը, ինչպէս յայտնի է, Մօսկվայի նահանգապետի կողմից պատասխանատուութեան ենթարկվել այն պատճառով, որ առանց թոյլտուութիւն ստանալու իշխանութիւնից ինքնակամ կերպով Մօսկվայից հեռացրել էին ժամանակցել Հելսինգֆօրսի համագումարին։ Երկուսի գործն էլ մօտ օրերս քննվել է նահանգական զեմստվային գործերի ատեանում և ապա ներկայացվել մինիստրների խորհրդին։ Ատեանը վճռել է Պետերբուրգ գնալու համար Գօլովինին նկատողութիւն անել, իսկ Հելսինգֆօրս գնալու համար յանդիմանութիւն, բայց առանց մտցնելու ծառայութեան ցուցակում։ Զելենօկովի վերաբերմամբ ատեանը բարեսիրտ է գտնվել և բաւականացել է միայն նկատողութեամբ։ Մինիստրների խորհուրդը գործը և ատեանի եզրակացութիւնը յանձնել է տեղական ինտեսական գործերի գլխաւոր վարչութեանը։ Վերջինս գտել է, որ Գօլովինին հարկաւոր է յանդիմանութիւն անել, առանց նկատողութեան, իսկ Զելենօկովին՝ նկատողութիւն միայն։ Մինիստրների խորհուրդը այդ որոշումը հաստատել է և գործը, որ մեծ հատոր էր դարձել, վերադարձրել է Մօսկվա։

—

Թէ ինչ չափերի է հասնում կարիքը Լօռի բանւորների մէջ շնորհիւ լօկաուտի ապացուցանում է հետևեալ փաստը։ Վարշաւայում ներկայումս կազմվել է մի կրուժօկ, որը նպատակ է դրել օգնութիւն ցոյց տալ Լօռիի բանւորների երեխաներին։ Այդ օգնութիւնը պէտք է արտայայտվի նրանով, որ կրուժօկը բանւորական երեխաներին պէտք է բաժանէ Վարշաւայի բնակիչների մէջ խնամելու մինչև լօկաուտի վերջանալը և դրանով էլ փրկելու, գոնէ, երեխաներին ըստանացող սովից և անգործութեան բոլոր հետևանքներից։ («Торг.-Пром.-Г.»)

—

Փետրվարի 7-ին բոլոր մինիստրները պրեմիէր մինիստր Մտոլիպինի հետ միասին գնացել են Ցարսկոյէ-Սէլօ, որտեղ Թագաւորի նախագահութեամբ կայացել է արտակարգ խորհրդակցութիւն ընտրութիւնների հարցի մասին։ («Утро»)

—

Արդիւնաբերութեան և առևտրի ներկայացուցիչների համագումարի խորհրդին կից կազմված երկաթուղային գործերի յատուկ մասնաժողովի խորհուրդը գաւառներից ստացնում է բազմաթիւ խնդիրքներ երկաթուղային նոր գծեր անցկացնելու մասին։ Մասնաւանդ այդ առիթով դիմումներ են անում հանքային արդիւնաբերողներն ու գործարանատէրերը։ («Т. П. Г.»)

—

Փետրվարի 6-ին Ստոլիպինը Ցարսկոյէ-Սելոյից վերադառնալուց յետոյ նիստ է հրաւիրում մինիստրական կաբինետին ստեղծված իրերի դրութեան մասին խորհրդածելու։ Կայսրութեան մէջ կատարված ընտրութիւնների հետևանքը խորհրդի վրա ծանր տպաւորութիւն է գործել, որովհետև չէին կարծում, որ այդքան մեծ թւով ձախակողմեանները կընտրվեն։ Ֆինանսների մինիստր Կոկօվցեվը մատնանշել է, որ ընտրութիւնների հետևանքը սաստիկ ազդեցութիւն է գործում արտասահմանեան բօրսաների վրա։ Լուր է պտտում, որ Կոկօվցեվը զեկուցում է ներկայացրել Ցարսկոյէ-Սելօյում, որտեղ այն միտքն է յայտնում, որ անհրաժեշտ է շուտով պայմանագրել կառավարութեան վերաբերմունքը դէպի Դուման, ոչ թէ անշուշտ ունենալու է ձախակողմեան մեծամասնութիւն։ Եւրօպայում երկիւղ են կրում, որ հին քաղաքականութեան շարունակութիւնը սուր կօնֆլիկտ կարող է առաջացնել երկրում և որ այս անգամ ժողովուրդը չէ կարող անտարբեր կերպով վերաբերվել Դումայի ճակատագրին, ինչպէս այդ պատահեց անցեալ յուլիսին։ («Утро»)

—

Սրանից մի քանի օր առաջ Մօսկվայի համալսարանում կազմակերպվել է ուսանողական կօմիտետ սովալներին օգնելու համար։ Կօմիտեսը նպատակ ունի նպաստներ հանգանակելու ուսանողների մէջ յօդուտ անբերրիութիւնից վնասված նահանգների գիւղացիների։ Իր գոյութեան հէնց առաջին շրջանում կօմիտետը որոշել է միջոցներ հայթայթելու համար դիմել։ 1) յօդուտ սովալների համերգ կազմել, 2) կազմակերպել մի շարք դասախօսութիւններ, 3) ժողովածու հրատարակել, 4) հանգանակութիւն բանալ ուսանողների մէջ, 5) ուսանողների միջոցով հանգանակութիւն սկսել հասարակութեան մէջ։ Ներկայումս ընտրված է ժամանակաւոր կօմիտետ, որի մէջ մտնում են 9 ուսանողներ։ Այդ կօմիտետը մի կոչով դիմել է ուսանողներին և խնդրել ակտիվ մասնակցութիւն ունենալ նրա գործունէութեան մէջ։ Նուէրներ ստացվում են առատութեամբ։ Բազմաթիւ ուսանողներ ցանկութիւն են յայտնել ակտիվ կերպով մասնակցելու կօմիտետի գործունէութեանը։ («Утро»)

—

Մօսկվայի հացահատիկների բօրսայի կօմիտեսը ուղարկել է ճանապարհների հաղորդակցութեան, առևտրի և արդիւնաբերութեան մինիստրներին հեռագիրներ հետևեալ բովանդակութեամբ. «Ի նկատի առնելով 1906 թ. Նոյեմբերի 15-ին հրատարած օրէնքը և նրա զօրութիւն ստանալը, կօմիտետը յիշեալ օրէնքի դէմ է համարում այն, որ երկաթուղիները ապրանքները պահելու համար վարձատրութիւն են վերցնում ոչ օրերի համար, մինչդեռ առևտրական հաստատութիւնները օրէնքի համաձայն չեն բանում և չեն կարող ապրանք դուրս բերել, որի շնորհիւ կօմիտետը խնդրամատոյց է լինում համաձայնեցնել երկաթուղիների գործունէութիւնը օրէնքի հետ և արգելել նրանց վարձատրութիւն վերցնելու յիշեալ օրերում ապրանքների պահպանութեան համար։

—

Ուրալսկում կազմակերպվել է մահմեդական կանանց նպաստամատոյց յանձնաժողով, որը նպաստներ է ժողովելու Գանձակի նահանգի ՇՇասված մահմեդականների համար։

—

Ինչպէս հաղորդում է «Рус. Слово» լրագիրը, հողային բանկերի ակցիօներների շրջանում շատ վառ խօսակցութիւններ են տեղի ունենում բեսարաբեան-տաւրիկեան հողային բանկի վարչութեան մէջ առաջացած ինցիդենտի վերաբերմամբ, որին առիթ է ներկայացել 1899 թ. Սերբիայի թագաւորի Բուքարեստում գտնվող կալուածքը նոյն բանկում գրաւ ընդունելը։ Ինչպէս երևում է բանկի այն հաշիւներից, որոնք պիտի ներկայացնին ակցիօներներին, յիշեալ կալուածքի համար բանկը վճարել է թագաւորին 638,850 ռուբլի, և 1904 թ. դեկտեմբերի 15-ին գրաւադրի ժամանակը յետաձգել է 5 տարով։ Սակայն, անցեալ տարվայ վերջերում, առանց բանկի թոյլտուութեան, կալուածքը փոխադրվել է ռումինական մի բանկերի և Սերբիայի թագաւորը ստացել է ծախված գումարի և գրաւադրի միջև եղած աւելորդ գումարը—957,500 ֆրանկ։ Ռումինական բանկերը առաջարկում է պարքի գումարը վերադարձնել բեսարաբեան-տաւրիկեան բանկին այն պայմանով միայն, որ վերջինս վերադարձնէ բանկերին եղած ծախքերը։ Բանկի վարչութիւնը իր հերթին անհրաժեշտ է համարում դատաստանական կերպով պահանջել իրան հասցրած վնասները։ Թէ ինչ ուղղութիւն կը տրվի այդ գործին՝ առ այժմ յայտնի չէ, բայց ասում են, որ բանկի վարչութիւնը իր որոշումներով աւելի տրամադիր է գործին տալ խաղաղ կերպարանք՝ բոլորովին ուշադիր չանելով ակցիօներների շահերը։ Այժմ վարչութիւնը կատարում է քննութիւն և յարաբերութեան մէջ է մտել գրաւ դրված կալուածքի հետ կապ ունեցող անձերի հետ։ Հետաքրքիր է նկատել, որ Սերբիայի թագաւորի կալուածքի վերաբերմամբ կատարված օպերացիան տեղի է ունեցել ֆինանսների մինիստրի առաջարկութեամբ։

—

«Ռուս ժողովրդի միացեալ դաշնակցութեան» գլխաւոր վարչութեան նախագահ Գրինգմուտի և նախագահի ոգնական հռչակաւոր Վօսաօրգօվ քահանայի միջև, լուրերին նայելով, կօնֆլիկտ է առաջացել, որի շնորհիւ «Моск. Вѣд.» խմբագրի եղբայրական յարաբերութիւնը կովկասեան թշնամի ազգերին «հաշտեցնող» յայտնի քարոզչի հետ խզվել է։ Կօնֆլիկտի պատճառը եղել է այն, որ Վօսաօրգօվ քահանան չափազանց դիւրահաւատ կերպով «դաշնակցութեան» տրամադրութեան տակ եղած խոշոր դրամները բաժանում էր ագիտացիաները և վարչութեան որոշումները իրագործելու համար։ Վօսաօրգօվ քահանան փողերը և անդամակցական տոմսակները նախագահի տեղակալութեամբ բաժանում էր, առանց ծանօթ լինելու ստացողների անձնաւորութեան հետ։ Այդպիսով վարչութեան տոմսակների հովանու տակ և նրա գումարներով կազմակերպվել են այնպիսի գաղափարների քարոզիչներ, որոնց դէմ այժմ հէնց իրանք «միացեալ» իսկական ռուս մարդիկ ստիպված էին կռիւ մղելու։ («Новь»)

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

12 փետրվարի

ԽԱՐԲԻՆ։ Տեղումս գտնվում է մեծ քանակութեամբ հայ Եպօսների համար։ Փետրվարի 7-ին Կուսնչէձում բացվել է եպօսական բանկ։

ԲԵՐԼԻՆ։ «Բէրզէն-Կուրէր» լրագիրը Պետական Դումայի ընտրութիւնների առիթով ասում է, որ Դումայի ներկայ կազմի ժամանակ կարելի է երկու ելք միայն—կամ Դուման կարձակվի, կամ թէ ընդդիմադիր մեծամասնութիւնը օգնութեան կը հասնէ կառավարութեանը։ Կուսակցութիւնների երկպառակութեան մէջ է կայանում կառավարութեան փրկութիւնը, և գուցէ Ռուսաստանի ապագան։ Երկու կողմից էլ անհրաժեշտ է նախազգուշութիւն և բարի կամք, հակառակ դէպքում խելօք գլուխները ոչ մի բանի չեն հասնի։ Ցաղութիւնը կը տանին ինտելլիգենցիայի այն մարդիկ, որոնք գտնվում են կադէտների մեծ կուսակցութեան մէջ, որ հանդիսանում է կարիերագոյն ֆակտոր, որի հետ մրցելու է կառավարութիւնը։ Ռուսական պարլամենտարիզմը «մատղաշ» պարլամենտարիզմ է, ընտրողական օրէնքը՝ վատ և անարդար սակայն բոլորը կորած չէ։ Ըստ երևոյթին, ամեն բան այժմ աւելի հանգստացել է։ Ոչինչ խելառ բան չը կայ, բայց եթէ վարդապետել բացարձակ արժատականութիւն, գործնականապէս գործելու ցանկութիւն երևան չը հանելով։ Ճ.ճռան ֆրազներով չէ կարելի բարձրացնել պետութիւնը—այս պէտք է լաւ ըմբռնեն Ռուսաստանում երկու կողմերն էլ։

13 փետրվարի

ՕԴԵՍՍԱ, 12 փետրվարի։ Հացի բօրսան վերբսկսեց իր գործունէութիւնը։ Միջնակարգ դպրոցներում պարապմունքները ընթանում են նորմալ կերպով։ Համալսարանի ռեկտորը առաջարկեց կենտրօնական մարմին—քննել պարապմունքները վերսկսելու հարցը։

Քաղաքում տիրել է նկատելի հանգստութիւն, փողոցներում ծեծ ու ջարդը իսպառ դադարել է։

ՎԱՐՇԱՎԱ, 12 փետրվարի։ Առաւօտեան մի անյայտ անձնաւորութիւն 4 անգամ կրակեց «Варшавскій Вѣстникъ»-ի նախկին խմբագիր, համալսարանի պրոֆէսօր Դաւիդովի վրա, սակայն գնդակը վրիպեց, որից յետոյ մահափորձողը փախաւ։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԴՈՒԻՇ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՑԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմնված 1880 թ.
(Գուկիա, Վօրոնցօվի արձանի հանդէպ)
ամեն օր, բացի կիրակի օրերից
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ՝
Բ. Ա. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վերաբուժութեան, վեներական (սիֆիլիս) մասնաբ. հ.։
Կ. Մ. ԶԻԿՕՎԱՆԻ—9½—10 ժ. աչքի, ներքին և նեարդային։
Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆՑ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.։
Մ. Գ. ԱԽՍԻՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներակ. և վիրաբուժութիւն։
Ա. Մ. ՓՈՒՂԻՆՕՎ—12—1 ժ. ներքին և երեխայոց ծաղկահատ.։
Կ. Ի. ԴԶԵԼԻԵՎ—1—2 ժ. ականջի, քթի և կոկորդի
Ա. Գ. ԿԱՐԱՊՕՏԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.։
ԿԻՆ-ԲԺԻՇԿ Ա. Ի. ՇԶԵՐԲԻՆԻՆԱ—1½—2 ժ. մանկաբարձութեան և կանանց հ.։
Գ. Ե. Գուրգենով—1—2 ժ. կանանց հ. և մանկաբարձութեան։
ԵՐԵԿՈՆՆԵՐԸ՝
Կ. Ի. ԴԶԵԼԻԵՎ—6½—7½ ժ.։
Վճարը 50 կ.։ Չքաւորները ձրի։ Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։
Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ՝ Բ. Նաւասարդեան

Կ. ԱՖՐԻԿԵԱՆԻ
անկարանը առաջարկում է պատուաստած մրգերի
ծառեր եւ տունկեր
ԷԺԱՆԱՑՐԱՅԻ ԳՆԵՐՈՎ
Ծառացուցակները ուղարկվում են ձրի։
Հասցէն՝ Горн, Тиф. губ.
(Ե. ու.) 7—10

„ՕՕՏՐՈՒԴՆԻԿ“
ՄԱՐԻԱՄ ՍՈՒՆԴՈՒԿԵԱՆԻ
Գրավաճառանոցը
(Բագու, Օլգինսկայա № 9)
Ընդունում է ամեն տեսակ հրատարակութիւններ կօմիսիայով և պահեստի համար։ Գ. պ. հրատարակիչներին խնդրում ենք ծանօթանալու համար ուղարկել իրանց հրատարակութիւնները և պայմանները։
(2.) 7—50

Գիմնազիայի I դասարանի մի աշակերտ ուսման վարձը չը կարողանալով վճարել, ստիպված է թողնել ուսումը. աղաչում է բարերարներին օգնել իրան, ով ինչքան կարող է, որպէսզի չը զրկվի ուսումից։ Նուէրները խնդրում է ուղղել «Մշակի» խմբագրութեանը։
3—3

ԾԱԽՎՈՒՄ Է
ԱՆԹՐԱՑԻՏ
60 պուդ կամ աւելի գնողները Թիֆլիսում ճանապարհի ծախս չեն վճարում։
Նոյն տեղը ծախվում է նաև ընտիր
ՁՈՐ ՓԱՅՏ
ԷԺԱՆ ԳՆԵՐՈՎ։ Հասցէն՝ Елизаветинская ул № 127, երկաթուղային վարչութեան կից։
(ու. շ. կ. ե.) 2—5

„Գուտտեմբերգ“
գրավաճառանոցում վաճառվում են
Հաուպտման, «Կառապան Հենշել», դրամա 5 գործ գերմ. թարգմ. Լ. Բաբայանի 50 կ.։
Մխիթար վարդապետ, «Հայերը Ռուսաստանում» 80 կ.։
Անդրօճիկ, «Ցունական Յեղափոխութեան Հերոսուհին», գինն է պօստի ծախսով 2 ր. 50 կոպէկ։
Փափազեան, «Զորեքլեղուեան Խօսակցութիւն» հայերէն, գաղիերէն, անգլիերէն և գերմաներէն, գինն է պօստի ծախսով 1 ր. 75 կ.։
Կաուցկի, «Կապիտալիստ դասակարգը», թարգմ. Սապահ-Գիւլեանի 15 կ.։
Կաուցկի, «Գործաւոր դասակարգը» (պրօլետարիատ) թարգմանութիւն Նոյնի 15 կ.։
«Ինչ արաւ օրօրոցի երգը» թարգմ. Ղ. կ. 10 կոպէկ։
Բարթոլդու կ. «Պատմութիւն Ցունաստանի», թուրքերի կ. Պօլսի առումից 1453 թ-ից մինչև մեր օրերը, թարգմ. Ս. Կանայեանց 1 ռուբլի։
Փիրղալամեանց Ղ. վարդապետ «Զորս ընկերք կամ ճանապարհորդութիւն Վանից մինչև Կ. Պօլիս» 50 կ.։
Ինֆրա, «Ներաշխարհ։ Նամակ առ Ինտրա» 1 ր. 20 կ.։
Աբովեն-Դասպար, «Հայրենիք և ազգայնական շարժումներ» 10 կ.։
Կոլօնա, «Ովքեր են սօցիալ դեմօկրատները և ինչ են ուզում» 3 կ.։
Մարսօվ, «Քաղաքական կուսակցութիւնները» թարգմ. Դաշտօյանի 7 կ.։
Մարխ, «Պատմական մատերիալիզմ և յաւելեալ արժէքի թէօրիան», թարգմ. Աղաթանի, 10 կ.։
Աբրդ-Հազիր, «Գող Հարօն, Տարօրինակ աղքատ 10 կ.։
Զասօդեմսկից. «Դնառակ որդին», թարգմ. Զոհրաբի 25 կ.։
2—2

ԲԺՇԿԱՊԵՏ
Մ. Պ. Զախարբէգեանց
ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐ՝
ՆԵՐՔԻՆ ԵՒ ԶՂԱՑԻՆ
ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ
Ընդունելութիւնը { առաւ. 10—12 ժ.
Տելեֆոն № 1087
Սօլոլակ, Երմոնտովսկայա փող., 16.
(ա. օ.) 108—150

Պահանջեցէք ամեն տեղ «ՕԴՕԲՐԻՆ»
Միայն Միխաիլ Լեբեդևի
„Этикетъ утвержденъ прав.“ մակագրութիւնով
Ամբողջ ապրանքը ստացած կոլորները և արտաքսուած դրամները։
Այս մէջքը մի քանի օրում ոչնչացնում է ոլորվելիքը։
Գլխաւոր պահեստատեղին դեղագործական ապրանքների վաճառման Կովկասեան ընկերութեան մէջ—Թիֆլիս, Բագու, Բաթում։
10, 20, 30 28—40

Թիֆլիսի Ժողովարան
Թիֆլիսի Ժողովարանի աւագների խորհուրդը խնդրում է պ.պ. անդամներին և կանդիդատներին, թիւրիմացութիւններից խուսափելու համար, որը կարող է ծագել անդամների և նրանց ընտանիքների Ժողովարան մտնելու ժամանակ ընտանեկան և ուրիշ երեկոյթներին, նախօրօք վերցնեն անուանական կօնտրամարկաները, որոնց ներկայացնելը կարող է պահանջվել մուտքի ժամանակ։ Կօնտրամարկաները տրվում են Ժողովարանի գրասենեակում ամեն օր, երեկոյեան 8—11 ժամը։
13, 21, 25 1—3

Բարձրագոյն կրթութեամբ, մենակ հայերէնից, իսկ ռուսերէնից միջակ։ Ցանկանում եմ մի որևիցէ գործով զբաղվել։ Վճարի փոխարէն՝ ֆրանսերէնից դասեր ունենալ։
Հարցնել «Մշակի» խմբագրատանը ժամը։ (կ. ե. հ.) 10—3 3—3

ԲԺՇԿ
Գ. Ն. ՄԱՂԱԲԵԱՆ
Մասնագէտ ՆԵՐՔԻՆ և ԵՐԵԽԱՑՈՑ հիւանդութիւնների առանձնապէս ստամոքսի և աղիքների հիւանդութիւններ։ Ընդունելութիւնը ամեն օր 12—1 ժ. առ. և 5—6 երեկ.
Միխայլովսկի պր. տ. Ճավճանիձէի № 36
71—100

ԲԺՇԿԱՊԵՏ
Տ. ԳԷՈՐԳ-ԲԷԳԵԱՆ
ԱԶՔԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ
Ընդունելութիւնն ամեն օր
Առաւօտեան ժամի 9-ից մինչև 12
Երեկոյեան » 5-ից մինչև 7
Վեչեմինօվսկայա փողոց № 8.
(Ե. հ. շ.) 26—100

Էնզելիում մի հայ ընտանիքի համար Մի ՀԱՅՈՒՀԻ է ՊԷՏՔ տրնտեսուհու պաշտօնով. ամբողջ տան իրաւունքը իր ձեռքին է լինելու. գործը թեթև է և վարձը ըստ արժանաւորութեան մինչև 15 ռուբլի ոռճիկ և տարեկան մի ձեռք զգեստ։ Հասցէն իմանալ «Մշակի» խմբագրատանը։
(կ. շ. ռ.) 2—5

Գտել եմ մի ոսկի. Երևանի նահանգի բնակիչ ԴԱՒԻԹ ՀԱՐԱՊԵՏՕՎԻ՝ անցագիրը № 126, և ենթաէյի նահանգական բանտի տեսչի կողմից տրված վկայականը № 26061, որով նրան թոյլատրվում է վերադառնալ աքսորից։ Ցիշեալ հայրապետօվը թող դիմէ «Մշակի» խմբագրատանը։
(կ. ե. չ.) 3—3

Ց. ԴԱՂԲԱՇԵԱՆԻ
I
ԼԻԱԿԱՏԱՐ ԲԱՌԱՐԱՆ
ՌՈՒՍԵՐԷՆԻՑ ՀԱՅԵՐԷՆ
Գինը 8 ր., կազմով 8 ր. 60 կ., 9 ր., 10 ր. և աւելի, նայած կազմին։ Ճանապարհածախսը հեղինակի վրա։
II
ԼԻԱԿԱՏԱՐ ԲԱՌԱՐԱՆ
ՀԱՅԵՐԷՆԻՑ ՌՈՒՍԵՐԷՆ
Լոյս տեսաւ **ԵՐԿՐՈՐԴ** պրակը։ Ամբողջ բառարանի բաժանորդագինը 5 ր., առանձին բառարանների և գնողների համար 4 ր.։ Թիֆլիսեցիք և գաւառեցիք ռուս-հայ լիակատար բառարանը կարող են ստանալ, իսկ հայ-ռուս լիակատար բառարանին բաժանորդ գրվել կարող են Համբարձումովարկաւագ Քարիմեանցի մօտ (Тифлисъ, Армянская Духовная Персисянъ Семинарія).
Ш
Գրպանի բառարան ռուսերէնից հայերէն։ Բաժանորդագինը 2 ր. 50 կոպ.։
օր. մ. 2—10

Երկրագործութեան մինիստրութեան և պետական կալուածների գործակալ
Մ. Ն. ՓՐԻԴՕՆԵԱՆԸ
(Թիֆլիս, Սերգեէվսկի փողոց, տ. № 11).

Ստղողի և մրգատու այգիները բուժելու համար առաջարկում է անգլիական լաւագոյն պղնձի արջասպ, զուտ ծծումբ, սրսկիչ «Վերմօրէշներ», փուքսեր և այլու այլ պարագաներ, ջրհան, քամիչներ, սեկատօրներ, դանակներ և այլն։
Ընդունվում են պատուէրներ պղտատու ծառերի սեփական բուծարանից, Սկրա կայարանի մօտ։ (Հ.) 9—12

ԺԻՐԱՐԴՕՎԻ
ՄԱՆՈՒՖԱԿՏՈՒՐԱՅԻՆ ՊԱՀԵՍՏ
փետրվարի 15, 16, 17, 19, 20, 21 և 22 փետրվարի
ՄԵԾ ՎԱՃԱՌՔ
մնացած կտորների եւ այլ ապրանքների չեղած
ԱՐԺԱՆ ԳՆԵՐՈՎ
ապրանքներից մի քանիսը
ԿԸ ՎԱՃԱՌՎԵՆ ԿԻՍԱԳԻՆ
(14, 18, 20,) 1—3

Ապպարատներ եւ պաստինկաներ զնելիս ուշադրութիւն դարձրէք գորգարան Դաւրի վրա „Пишущій Амуръ“.
Օգտակար ընծայ առաջիկայ տօներին
ՄԵԾԱՔԱՆԱԿ ԵՒ ՀԱՏՈՎ ՎԱՃԱՌԵԼՈՒ ՊԱՀԵՍՏ
ԳՐԱՄՄՕՖՕՆՆԵՐԻ
ԵՒ
ՊԼԱՍՏԻՆԿԱՆԵՐԻ
ԱՄԲՈՂՋ ԿՈՎԿԱՍԻ ՀԱՄԱՐ
Ստացված են մեծ թւով ամենավերջին նորութիւնների պլաստինկաներ, զանազան լեզուներով։
ԳՆԵՐԸ ԱՐԺԱՆ ԵՆ
Պատկերազարդ կատալօգները և պիեսների ցուցակները ուղարկվում և տրվում են ձրի։

ԳՈՐԾ ԴՐՈՇՄ
„ԳՐԱՄՄՕՖՕՆ“
Սկցիոնելական ընկերութեան
Թիֆլիսի բաժանմունք
Թիֆլիս, Գօլովինսկի պրօսպեկտ, տ. № 9.
Հեռագրի համար հասցէն՝ Тифлисъ "Граммокомпанія,,.
(չ. շ.) 23—25

Տպարան «ՀԵՐՄԵՍ» ընկ.
Электропечатная Типографскаго Т—ва. «ГЕРМЕСЪ» Мадатовская, уд.